ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

UNDP

UNFPA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

OSCE Organization for Security and Co-operation in Europe

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Այս ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սույն ուղեցույցի մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:

Այս ուղեցույցը տպագրվել է Նորվեգիայի Թագավորության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Նորվեգիայի Թագավորության արտաքին գործերի նախարարության տեսակետները:

**Ուշադրություն. ուղեցույցը զգայուն բովանդակություն է պարունակում, այդ թվում՝ դիակների՝ խոշոր պլանով կատարված լուսանկարներ:*

Բովանդակություն

Ներածություն.....1

1. Ընդհանուր սկզբունքներ

1.1 Մի վնասեք.....3
1.2 Տեղեկացված համաձայնություն.....3
1.3 Օբյեկտիվություն, անաչառություն և անկախություն.....9
1.4 Հաշվետվողականություն և օրինականություն.....12
1.5 Արհեստավարժություն և հարգանք.....15

2. Նախապատրաստություն

2.1 Վաղ նախապատրաստում.....16
2.2 Ռեսուրսներ.....20
2.3 Անվտանգություն.....23
2.4 Գաղտնիություն.....24
2.5 Փոխանցվող տրավմա.....24

3. Խոցելի անձինք

3.1 Ընդհանուր սկզբունքներ.....26
3.2 Տրավմա.....28
3.3 Խոցելի անձանց հետ հարաբերությունները.....29

4. Անձից վկայություն վերցնելը

4.1 Ընդհանուր ուղղորդող սկզբունքներ.....31
4.2 Անձից վկայություն վերցնելու ընդհանուր նկատառումներ.....31
4.3 Պլանավորում և նախապատրաստում.....33
4.4 Ներգրավել և բացատրել.....34
4.5 Վկայություն.....34
4.6 Ավարտ.....36
4.7 Գնահատում.....36
4.8 Վկայության փաստաթղթավորում.....36
4.9 Խոցելի անձանցից վկայություն վերցնելը.....36
4.10 Սեռական և գենդերային հիմքով հանցագործությունների զոհեր (SGBC).....37
4.11 Երեխաներ.....38
4.12 Անձինք, որոնք, հնարավոր է, հանցագործություններ են կատարել.....39

5. Լուսա և տեսանկարահանում

5.1 Նախնական քայլեր.....40
5.2 Որոշեք, թե ինչ է պետք տեսա կամ լուսանկարահանել.....40
5.3 Ինչպես լուսա և տեսանկարահանումներ իրականացնել.....40
5.4 Պահպանեք տեսանյութերը և լուսանկարները.....40

6. Իրեղեն ապացույցներ
6.1 Հիմնական սկզբունքներ....42
6.2 Գործնական խորհուրդներ....42
6.3 Նույնականացում....42

7. Փաստաթղթեր և թվային տվյալներ
7.1 Սահմանում և սկզբունքներ....43
7.2 Թվային տեղեկատվության առանձնահատկությունները....43

8. Առցանց փաստահավաքություն
8.1 Հիմնական ստանդարտները....45

9. Ֆիզիկական վնասվածքներ
9.1 Առողջապահական մասնագետների ներգրավում....47

10. Հանցագործության վայրեր
10.1 Հանցագործության վայրի քննության սկզբունքներ....48
10.2 Ապահովեք և պահպանեք հանցագործության վայրի ամբողջականությունը....51
10.3 Փաստաթղթավորեք հանցագործության վայրի ձեր քննությունը....51
10.4 Հանցագործության վայրին առնչվող այլ սկզբունքներ....51
10.5 Զանգվածային հուղարկավորությունների և գերեզմանների փաստաթղթավորում....52

11. Նյութերի պահպանում
11.1 Ընդհանուր սկզբունքներ....54
11.2 Փաթեթավորում....54
11.3 Պիտակավորում, կնքում և կատալոգավորում....54
11.4 Պահպանում....54

12. Հավաքված տեղեկատվության վերլուծություն
12.1 Հիմնական սկզբունքներ....55

Օգտակար նյութեր....58

Հավելված 1. Տեղեկացված համաձայնության նմուշ....59

Հավելված 2. Տվյալների հավաքման ձևանմուշ....61

Հավելված 3. Լուսանկարների միջոցով հանցագործության նույնականացման օրինակներ....62

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փաստահավաք աշխատանքները մարդու իրավունքների հնարավոր խախտումների նույնականացման, հանցագործությունների բարձրաձայնման գործընթացների կարևորագույն մասն են, ինչի շրջանակում կարևոր է վկայություն տվող անձի հետ ճշգրիտ, հասցեական աշխատանքը։ Աշխատանքի ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել որոշ սկզբունքների պահպանմանը, առանց որոնց անհնար կլինի իրականացնել արդյունավետ, հասցեական, հնարավոր խախտումներ վեր հանող փաստահավաքություն։

Անձինք, որոնց իրավունքները խախտվել են, անմիջական «հանցագործների» արարքներից զատ, կարող են բախվել այլ խնդիրների ևս՝ իրենց հետագա կյանքի, հանցագործությունների նույնականացման, փաստահավաք աշխատանքներին մասնակցելու, վերապրածը վերապատմելու ընթացքում։ Վնաս կարող է հասցնել յուրաքանչյուրը՝ փաստահավաք աշխատանք իրականացնող մասնագետից մինչև բուժօգնություն ցուցաբերող անձ կամ արդարադատություն իրականացնող մարմնի ներկայացուցիչ։

Վտանգ կա, որ փաստահավաք աշխատանքները կարող են «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքին համապատասխան տարրեր և վարքագիծ պարունակել՝ վերջին պլան մղելով իր հետ տեղի ունեցածը կիսելու պատրաստակամություն հայտնած անձի հույզերն ու իրավունքները։ Մինչդեռ, արդյունավետ փաստահավաքությունը ենթադրում է հակառակը. առաջնային դեր տալով վերապրածին, պահպանելով էթիկայի բոլոր նորմերն ու ապահովելով վստահության և արհեստավարժության մթնոլորտ՝ գործընթացից ստանալ առավելագույնը, նվազագույնի հասցնելով ներգրավված կողմերի վրա հնարավոր բացասական ազդեցությունները։

Փաստահավաք աշխատանքն իրականացնողները չեն կարող վկայություն տվողին զերծ պահել բոլոր վտանգներից, սակայն կարևոր է հիշել, որ գործընթացի հիմքում պետք է ընկած լինի անձի բարօրությունն ու անվտանգությունը։ Դրա ապահովումից է կախված նաև ողջ գործընթացի հաջողությունը։

Հնարավոր ռիսկերի գիտակցումը, սակայն, չի ենթադրում փաստավահաք աշխատանքից խուսափելը կամ չկատարելը։ Հակառակը՝ գլխավոր նպատակն է վկայություն տվողին տրամադրել հարթակ՝ իր հետ տեղի ունեցածի մասին բարձրաձայնելու համար, միևնույն ժամանակ՝ վերջինիս համար ապահովելով պաշտպանիչ օղակներ և անհրաժեշտ գործիքակազմ։

Այս ուղեցույցն[1] առաջարկում է մի շարք կարևոր սկզբունքներ, օգտակար խորհուրդներ ու հմտություններ՝ թե բոլոր կողմերի բարօրության ու անվտանգության ապահովման, թե փաստահավաք գործունեության արդյունավետության ապահովման համար: Այս ուղեցույցի կիրառությամբ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հավաքված փաստերը կարող են հիմք ծառայել նաև հանցագործությունների նույնականացման և քրեական հետապնդման համար: Ուղեցույցը կարող է օգտակար լինել ինչպես պետական մարմինների հետ սերտորեն համագործակցող կամ փոխկապակցված կառույցների, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների համար:

1. Ուղեցույցը մշակվել է հեղինակների մասնագիտական փորձի և մի շարք աղբյուրների ուսումնասիրության ու համադրության արդյունքում: Ուսումնասիրված բազմաթիվ նյութերից առանձնակի հիշատակման են արժանի հետևյալները՝ «Documenting international crimes and human rights violations for accountability purposes: Guidelines for civil society organisations», «Witness Statements in International Human Rights Litigation: Preparation Guide»:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1.1 Մի վնասեք

«Մի վնասիր»-ը փաստահավաք աշխատանքների շրջանակում էթիկայի նորմերի պահպանման կարևորագույն սկզբունքներից է: Փաստահավաքություն իրականացնող մասնագետները պետք է ամբողջովին գիտակցեն գործընթացի հնարավոր բացասական ներգործությունը վկայություն տվողի, այլ ներգրավված անձանց և հենց իրենց վրա: Փաստահավաքության մեջ ներգրավված անձանցից պահանջվում է դրսևորել արհեստավարժության բարձր մակարդակ՝ գործադրելու հնարավոր բոլոր մեխանիզմները՝ մարդկանց վրա գործընթացի հնարավոր բացասական ազդեցության չափը նվազագույնի հասցնելու համար:

- Գործեք տեղեկատվություն տրամադրող անձանց, միջնորդների, տեղական համայնքների և փաստահավաք գործունեության մեջ ներգրավված այլ անձանց (ներառյալ ձեզ) **լավագույն շահին** համապատասխան:
- Որպես առաջնահերթություն ընկալեք փաստահավաք աշխատանքին մասնակցող անձանց իրավունքները՝ վերջիններիս **անվտանգությունը, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցությունը:**
- Մի մոռացեք աշխատանքում ներգրավված **անձի ինքնավարության** մասին: Փաստահավաքության կարևոր տարրերից է մարդու՝ անձնական որոշումներ կայացնելու և ազատություն ունենալու իրավունքի պատշաճ իրացումը:

Փորձեք նվազագույնի հասցնել փաստահավաքության գործընթացի վրա **հնարավոր արտաքին ազդեցությունները:** Անկախ նրանից, թե որ կազմակերպությունը կամ ինստիտուտն եք ներկայացնում, համոզվեք, որ **ձեր կազմակերպության՝ խնդրի մասին ունեցած պատկերացումները ոչ թե խոչընդոտում, այլ լրացնում են** փաստավաքության վերջնարդյունքին հասնելու ջանքերին:

Առաջին հերթին հաշվետու եղեք ինքներդ ձեզ՝ **պաշտպանելու մարդու լավագույն շահը,** և հետո միայն փորձեք հասնել ձեր կազմակերպության առաջադրած նպատակ-առաքելությանը:

1.2 Տեղեկացված համաձայնություն

Փաստահավաք աշխատանքներում ներգրավված անձի ինքնավարության գլխավոր երաշխիքներից է **տեղեկացված համաձայնության առկայությունը:**

Ներգրավված անհատը պետք է ունենա բացարձակ ազատություն՝ գործընթացի բոլոր փուլերում ընտրելու իր մասնակցության չափը, ձևը, աստիճանը, կամ էլ՝ **ընդհանրապես հրաժարվելու որևէ ներգրավվածությունից:** Աշխատանքի մաս կազմող անձինք լիազորված են ազատորեն կայացնելու իրենց վերաբերող որոշումներ: Այս լիազորությունը հիմնված է թե էթիկայի տեսանկյունից անձի ունեցած ինքնավարության, թե վերջինիս համար օրենքով նախատեսված ազատությունների, ինքնորոշման իրավունքի վրա:

Տեղեկացված համաձայնության մեջ տեղ գտած դրույթները պետք է պահպանվեն փաստահավաք աշխատանքի բոլոր փուլերում: Աշխատանքներում ներգրավված **անձը պետք է համաձայնություն տա իրեն վերաբերող և իր հետ առնչություն ունեցող բոլոր տեսակի գործողությունների անցկացման համար,** ինչպիսիք են, օրինակ՝ հարցազրույցը, տեսա և լուսանկարահանումը, ձայնագրությունը, դեպի աջակցության ծառայություններ ուղղորդումը, տվյալների՝ երրորդ անձանց տրամադրումը:

Փաստահավաքությունն իրականացնող մասնագետից պահանջվում է մասնակից անձանց ներկայացնել.

- Փաստահավաք աշխատանքի բոլոր փուլերի և հավաքված ողջ տեղեկատվության հետագա օգտագործման մանրամասները,
- Գաղտնիության ապահովման նշանակությունն ու հնարավոր կիրառությունը,
- Գործընթացին հաջորդող բոլոր փուլերը, ներառյալ՝ հետագայում հանրայնացման ենթակա տեղեկատվության վերանայումը,
- Մասնակցության ռիսկերն ու օգուտները:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի որոշ վերաբերելի դրույթներ[2]

Հոդված 16, մաս 6

Այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին դիմելու համար լիազորագիր կամ գրավոր համաձայնություն չի պահանջվում, եթե դա կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

Հոդված 17, մաս 7

Պաշտպանին ներկայացված բողոքը համարվում է բողոք ներկայացրած անձի համաձայնություն և հիմք է անհրաժեշտ անձնական տվյալները Պաշտպանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանալու համար:

Հոդված 18, մասեր 1 և 2

Մինչև բողոքի վերաբերյալ Պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը քննարկման ենթակա բողոքները կամ դրանց բովանդակությունը հրապարակման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արդեն հրապարակված են բողոքը ներկայացնողի կամ այլ անձանց կողմից:

Իր գործունեության ընթացքում դիմողի կամ այլ անձի մասին իրեն հայտնի դարձած տվյալները Պաշտպանը կարող է հրապարակել միայն այդ անձանց գրավոր համաձայնությամբ:

Հոդված 28, մաս 2

Կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակի շրջանակներում ձեռք բերված տեղեկությունները ենթակա են պաշտպանության: Անձնական տվյալները ենթակա չեն հրապարակման՝ առանց անձի գրավոր համաձայնության:

Հոդված 30.2, մաս 4

Խորհրդատվության շրջանակում ձեռք բերված տեղեկությունները և անձնական տվյալները ենթակա չեն հրապարակման առանց անձի գրավոր համաձայնության:

Տեղեկացված համաձայնություն ստանալիս

- **Մի տվեք ոչ իրատեսական երաշխիքներ կամ խոստումներ՝** տեղեկատվության հետագա օգտագործման վերաբերյալ:
- Նախապես ստացեք այն անձի կամ կազմակերպության տեղեկացված համաձայնությունը, որի հետ պատրաստվում եք համագործակցել՝ տեղեկատվության հավաքման նպատակով:

2. Մարդու իրավունքների պաշտպանն իր առաքելության իրագործման համար իրավասությունների լայն շրջանակ ունի՝ համեմատած, օրինակ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ իրավապաշտպանների հետ: Ինչպես երևում է հոդված 16-ից և 17-ից, որոշ իրավիճակներում Պաշտպանը կարող է շահերի պաշտպանություն իրականացնել անգամ առանց անձի գրավոր համաձայնության, ինչպես նաև՝ կարող է տարբեր կառույցներից անձի անձնական տվյալներ ստանալ: Չնայած մանդատով պայմանավորված լայն իրավասություններին, այնուամենայնիվ, անձի մասին հայտնի դարձած տվյալները հրապարակելու կամ երրորդ կողմին դրանք փոխանցելու համար անհրաժեշտ է անձի գրավոր, տեղեկացված համաձայնությունը:

Համաձայնությունը պետք է լինի.

Տեղեկացված

Ամբողջական բացատրություն տվեք տվյալ գործողության բնույթի և նպատակի, կիրառվող ընթացակարգի, ստացված տեղեկատվության օգտագործման եղանակների և դրա փոխանակման հնարավոր հետևանքների, ներառյալ՝ անվտանգության հնարավոր ռիսկերի մասին:

Ժամանակավոր

Համոզվեք, որ անձը հասկանում է, որ ինքը ***կարող է ցանկացած պահի հետ կանչել համագործակցելու իր համաձայնությունը:*** *Տրամադրված տեղեկատվությունը կիսելու (այլ կողմերի փոխանցելու) համաձայնությունը ևս կարող է հետ կանչվել՝ նախքան այդ տեղեկատվությունը իրավասու մարմիններին, Միջազգային քրեական դատարանին (ՄՔԴ) կամ միջազգային այլ մեխանիզմներին փոխանցելը:* ***Պարբերաբար թարմացրեք (վերահաստատեք) տեղեկացված համաձայնությունը՝*** *կախված փաստահավաք գործունեության ընթացքից:*



Կամավոր

Հարգեք ազատ կամքը և համոզվեք, որ անձը տալիս է իր համաձայնությունը՝ կամավոր: ***Ուշադիր եղեք սոցիալական համատեքստերին, որոնք կարող են սահմանափակել անձի՝ ազատ կերպով համաձայնություն տալու կարողությունը:***

Բացահայտ

Տեղեկացված համաձայնության տրամադրման մասին կազմեք արձանագրություն՝ ստորագրված փաստաթղթի ձևաչափով ***(նմուշը՝ Տե՛ս Հավելված 1-ում):***

Տեղեկացված համաձայնություն տրամադրելու որոշ առանձնահատկություններ

Եթե որոշել եք հարցազրույց անցկացնել, օրինակ, ինքնուրույն ստորագրություն տրամադրելու անկարողություն ունեցող անձի հետ, և տեղեկացված համաձայնության ստորագրման գործընթացը պետք է իրականացվի այլ անձի (օրինակ՝ խնամակալի, հոգաբարձու, լիազորված անձ) կողմից, անհրաժեշտ է վկայություն տվողի համար բարձրաձայն ընթերցել համաձայնության տեքստն ամբողջությամբ՝ ընթացքում մանրամասնելով վերջինիս հուզող բոլոր դետալները:

Երեխաների պարագայում հիմնականում ընդունված է համարել, որ վերջիններս չեն կարող տեղեկացված համաձայնություն տալ: **Նման դեպքերում տեղեկացված համաձայնություն պետք է տրամադրի երեխայի ծնողը կամ խնամակալը:**

Սակայն կարևոր է ուշադիր լինել մի քանի նրբությունների, և որոշում կայացնելիս, մեծ նշանակություն տալ հարցազրույցի համատեքստին: Օրինակ՝ եթե ցանկանում եք հարցազրույց անցկացնել ծնողների կամ խնամակալների կողմից բռնության ենթարկված երեխայի հետ, այս դեպքում ոչ միայն պետք է բավարարվել երեխայի տված համաձայնությամբ, այլ ծնողներին կամ խնամակալներին առհասարակ դուրս թողնել երեխայից հարցազրույց վերցնելու գործընթացից: Նմանատիպ որոշումը կարող է կանխել երեխայի՝ վախից և այլ դրդապատճառներից ելնելով տեղեկատվություն «թաքցնելը», և օգնել ձեզ՝ բացահայտելու ճշմարտությունը:

Մնացյալ դեպքերում, երբ չկա ծնողի կամ խնամակալի կողմից երեխայի վրա ունեցած բացասական ներգործության որևէ հիմնավոր կասկած, անհրաժեշտ է ծնողից կամ խնամակալից ստանալ տեղեկացված համաձայնություն՝ երեխայի հետ հարցազրույց անցկացնելու համար:

Տեղեկացված համաձայնությունը՝ արտակարգ իրավիճակների ժամանակ

Շատ դեպքերում, հատկապես արտակարգ իրավիճակներում, գրավոր համաձայնություն ստանալը կարող է իրատեսական և կիրառական չլինել՝ իրադարձությունների հրատապության և քաոսային բնույթի պատճառով: Ամեն դեպքում, եթե անգամ գործնականում հնարավոր չէ ստանալ գրավոր համաձայնություն, ապա, միևնույն է, անհրաժեշտ է ստանալ բանավոր համաձայնություն: Բանավոր համաձայնություն ստանալու համար հաճախ կիրառվում է ձայնային ստորագրությունը **(voice signature):** Այս մեթոդի

կիրառման դեպքում հարցազրույցին մասնակցող անձը ձայնագրառման համար պետք է նշի իր անուն-ազգանունը և հստակ կերպով հայտնի իր համաձայնությունը տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

Անհատի ձայնագրված պատասխանը, որն արտացոլում է նրա ձայնի յուրահատուկ հատկանիշները, ծառայում է որպես նրա համաձայնության հաստատում: Այսուհանդերձ, որպես ընդհանուր կանոն, պետք է ունենալ հարցազրույցին մասնակցող անձի գրավոր համաձայնությունը, իսկ բանավոր համաձայնությունը՝ որպես ընդհանուր կանոնից բացառություն՝ թույլ չտալով այդ մեթոդի կիրառման չարաշահում:

Վկայություն տվող անձը կարող է որոշել, թե որ կառույցի համար եք օգտագործելու իր պատմությունը

Անձի պատմության և վերջինիս փորձառության հետ առնչվելիս կարևոր է չմոռանալ անձի ինքնավարության սկզբունքի մասին: Իր պատմությունը ձեզ հետ կիսող անձն ունի լիակատար ազատություն՝ ընտրելու, թե դուք ինչպես եք օգտագործելու իր հետ տեղի ունեցածի վկայությունը: Անձը կարող է ձեզ թույլտվություն տալ իր պատմությունն օգտագործել մեկ, հստակ նպատակով, և մերժել տեղեկատվության՝ այլ նպատակներով օգտագործումը: Օրինակ՝ եթե անձը ցանկանում է, որ իր հարցազրույցի բովանդակությունը կիրառելի լինի միայն արդարադատության կոնկրետ մեխանիզմի դիմելու համար և խնդրում է տեղեկատվությունը մեկ այլ նպատակով չօգտագործել, կարևոր է տրամադրել վերջինիս նմանատիպ ընտրության հնարավորություն՝ արտացոլելով նրա դիրքորոշումը տեղեկացված համաձայնության արձանագրության / թերթիկի մեջ:

Փաստահավաքությանը ներկա այլ անձանցից գաղտնիության պահպանման համաձայնություն ստանալը

Եթե անձը ցանկանում է, որ հարցազրույցին իր հետ նաև ուղեկցող անձ ներկա լինի (ընտանիքի անդամ, հոգեբան, սոցիալական աշխատող), ապա այս դեպքում պետք է մի քանի քայլ ձեռնարկել: Նախ՝ գնահատեք ուղեկցող անձի ներկայության անհրաժեշտությունը և փորձեք խորապես հասկանալ, թե որն է նրա ներկայության պատճառը: Օրինակ՝ կարող է լինել իրավիճակ, երբ հարցազրույց տվող անձը բռնաճնշումների է ենթարկվում հենց իր իսկ խնամակալի կամ ընտանիքի անդամի կողմից: Այս դեպքում անհրաժեշտ է բացառել տվյալ անձի՝ փաստահավաքության աշխատանքներում ներգրավվածությունը, տեղեկատվության և պատմության իրական

պատկերի դուրսբերման համար։

Եթե նմանատիպ ռիսկերը բացառված են, կարող եք երրորդ անձին ներգրավել հարցազրույցի գործընթացում՝ վերջինից վերցնելով գաղտնիության պահպանման մասին համաձայնություն։ Կարևոր է տվյալ անձին հիշեցնել, որ ինքը փաստահավաքության գործընթացի մասնակից չէ, և իր ներգրավվածությունը, այլ՝ լրացուցիչ հանգամանքներ ի հայտ չգալու դեպքում, սահմանափակվում է հարցվողին աջակցություն ցուցաբերելու պարտականությամբ։

1.3 Օբյեկտիվություն, անաչառություն և անկախություն

Փաստահավաք աշխատանքից լավագույն արդյունք ստանալու կարևոր, բայց հաճախ դժվար ապահովվող նախադրյալներից է թեմայի նկատմամբ ոչ կանխակալ, անաչառ վերաբերմունքի ձևավորումը։ Շատ հարցեր ունեն զգայունություն, ինչպես նաև՝ հենց **մասնագետի անձնական կյանքի հետ հնարավոր առնչություն:** Կարևոր է մշակել մեխանիզմներ՝ աշխատանքի ընդհանուր **բնույթն ու եզրահանգումները** հնարավորինս անաչառ և օբյեկտիվ դարձնելու համար։

Կարևոր է չշփոթել կողմնակալությունն ու կանխակալ վերաբերմունքն ապրումակցման հետ. խոցելի թեմաների և անձանց հետ աշխատելիս ապրումակցումն անհրաժեշտ մեխանիզմ է, որն օգնում է խուսափել անցանկալի, վկայություն տվող անձին վնասող և կրկնակի տրավմայի ենթարկող իրավիճակներից։ Իսկ մասնագետից էլ տվյալների պատշաճ հավաքման համար պահանջվում է պահպանել անաչառություն և չտրվել զգացմունքներին՝ անկախ այն հանգամանքից, թե քննարկվող թեման վերջինիս համար անձնապես ինչ նշանակություն ունի։

Ինչպե՞ս պահպանել անկողմնակալություն ու անաչառություն

- Իրականացրեք ձեր գործունեությունը՝ հիմնվելով օբյեկտիվության, անաչառության և անկախության սկզբունքների վրա, որպեսզի կարողանաք նպաստել ճշմարտության բացահայտման ընդհանուր նպատակին։
- **Ենթադրություններ մի արեք և մի ազդեք** տեղեկատվություն տրամադրողների վրա։
- Թույլ տվեք, որ անձը պատմի իր իրական պատմությունը և **ոչ այն, ինչ դուք եք ուզում լսել:**
- **Մի կարծեք, թե գիտեք՝ մարդը ինչ է ուզում / պատրաստվում ասել:**

- Հավասարապես փաստաթղթավորեք **կողմ և դեմ (մեղադրող և արդարացնող)** տեղեկատվությունը:
- Զերծ մնացեք որևէ իշխանության, անձի և կազմակերպության **միջամտությունից կամ ազդեցությունից:** Փաստահավաք աշխատանքից առաջ և դրա ընթացքում փորձեք չմտածել այլ անձանց, կազմակերպությունների, ղեկավարների՝ աշխատանքի արդյունքի վերաբերյալ ունեցած **ակնկալիքների մասին:** Սա կապահովի հարցազրույցի ընթացքում ուղղորդող հարցերի բացառումն ու հնարավորություն կտա վկայություն տվող անձանց բարձրաձայնել իրենց հետ տեղի ունեցածը:
- **Նույնականացրեք ձեր կողմից հնարավոր կանխակալ վերաբերմունքի առկայությունը,** որպեսզի նվազագույնի հասցնեք դրա՝ ձեր վրա ունեցած հնարավոր ազդեցությունը: Օրինակ, եթե փաստահավաք աշխատանք եք իրականացնում գերությունից վերադարձած անձի հետ, հաշվի առեք թեմայի շուրջ ձեր ունեցած անձնական վերաբերմունքի տարրերն ու առանձնահատկությունները՝ փորձելով մի կողմ թողնել դրանք:
- Անկողմնակալության ապահովման անհնարինության դեպքում խնդրեք, որ տվյալ աշխատանքը **որևէ այլ անձ կատարի:**
- Փորձեք զերծ մնալ հաստատման կողմնակալությունից (confirmation bias):

Ի՞նչ է հաստատման կողմնակալությունը (confirmation bias)

Հաստատման կողմնակալությունը ենթադրում է **անձի՝ սեփական համոզմունքներն ու պատկերացումները հաստատող տեղեկատվության որոնում:** Մարդը հակված է լինում մեկնաբանել տեղեկատվությունն այնպես, որ վերջինս համապատասխանի իր՝ **նախապես ունեցած ընկալումներին, միևնույն ժամանակ անտեսելով իր պատկերացումներին հակասող ցանկացած տվյալ:**

Փաստահավաքություն իրականացնող մասնագետը կարող է (ոչ միտումնավոր, ենթագիտակցական մակարդակում) սեփական համոզմունքներից ելնելով ուղղորդող հարցադրումներ անել: Այդ դեպքում հարցազրուցավարը ոչ թե բացահայտում է իրականությունը, այլ իր անձնական մոտեցումները որպես ճշմարտություն ներկայացնող տեղեկատվություն է հավաքում:

Հաստատման կողմնակալության նախանշաններն են

- Դուք որոնում եք Ձեր՝ արդեն իսկ ձևավորված պատկերացումները հաստատող տեղեկատվություն:
- Դուք անտեսում եք Ձեր՝ արդեն իսկ ձևավորած պատկերացումներին հակասող տեղեկատվությունը:
- Դուք նշանակություն եք տալիս Ձեր մեջ ձևավորված կարծրատիպերին և անձնական կողմնակալության տարրերին՝ տեղեկատվության վերլուծության ընթացքում:
- Դուք ընտրողաբար «հիշում եք» Ձեր համոզմունքները հաստատող տեղեկատվությունը, և պատահաբար «մոռանում» Ձեր պատկերացումներին հակասող բոլոր մանրամասները:
- Դուք ունենում եք ուժեղ հույզեր, երբ գտնում եք Ձեր պատկերացումները հավաստող տվյալներ, և նկատում եք հույզերի բացակայություն՝ ձևավորված վերաբերմունքին չհամապատասխանող տեղեկատվության հանդիպելիս:





Ինչպե՞ս նվազեցնել հաստատման կողմնակալության՝ Ձեզ ու Ձեր աշխատանքի վրա ունեցած ազդեցությունը

- Ուսումնասիրեք Ձեր անձնական կողմնակալության տարրերը և փորձեք հասկանալ, թե դրանք ինչպես կարող են անդրադառնալ Ձեր՝ որոշումներ կայացնելու գործընթացի վրա:
- Որոշում կայացնելիս կամ կարծիք կազմելիս փորձեք համեմատել և հաշվի առնել առկա ողջ տեղեկատվությունը, այլ ոչ միայն այն, ինչը հաստատում է Ձեր ունեցած կանխակալ մոտեցումը:
- Փորձեք ներգրավել նույն թեմայի շուրջ տարբեր կարծիքներ ունեցող անձանց կամ առնվազն, հնարավորության դեպքում, վերջիններիցս Ձեր տեսակետից տարբերվող կարծիք հարցրեք:
- Փորձեք հնարավորինս բաց լինել՝ նոր տեղեկատվության ի հայտ գալու դեպքում Ձեր տեսակետը փոփոխելու հարցում:



1.4 Հաշվետվողականություն և օրինականություն

Փաստահավաք աշխատանքի կարևոր բաղադրիչներից են հաշվետվողականությունն ու ստանձնած աշխատանքի նկատմամբ պատասխանատվության զգացումը։ Կարևոր է հստակ նույնականացնել հաշվետվողականության շրջանակը և դրանից բխող բոլոր քայլերն ու գործողությունները։ Օրինակ, եթե փաստավահաք աշխատանքն իրականացնում եք պետական իրավասու մարմնի անունից կամ վերջինիս հետ համագործակցության շրջանակում, կարևոր է առաջնային պլան մղել այն հանգամանքը, որ **պետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու իր քաղաքացիների իրավունքներն ու շահերը:** Այդ համատեքստում փորձեք գործել **վկայություն տվողի գերակա շահից ելնելով՝** ստանձնելով վերջինիս և պետության կամ հանցագործությունն իրականացրած սուբյեկտի միջև «կամրջի» դերը։

Հիշեք, որ ձեր կատարած աշխատանքը կարող է հետագայում դառնալ հանցագործներին նույնականացնելու, վերջիններիս միջազգային ատյաններում պատասխանատվության ենթարկելու կարևոր հիմք և գործիքակազմ։ Հետևաբար, շատ կարևոր է կիրառել այս ուղեցույցում զետեղված հրահանգներն ու խորհուրդները, որպեսզի հետագայում ձեր հավաքած տվյալների անաչառությունը, օրինականությունն ու հուսալիությունն անժխտելի լինեն։

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) մանդատով պայմանավորված՝ փաստահավաքության առանձնահատկությունները

ՄԻՊ աշխատակազմն իր մանդատի շրջանակում պետական կառույցների հետ լայն համագործակցության հնարավորություն ունի։ Նմանատիպ կառույցների ռեսուրսների և տրամադրված աջակցության ու տեղեկատվության ճիշտ և հասցեական օգտագործումը կարող է էլ ավելի արժանահավատություն հաղորդել փաստահավաք գործողություններին, հավաքված տվյալներին և դրանց վերլուծությանը՝ հավելյալ տեսակետ ու տեղեկատվության հարստություն ապահովելով ընդհանուր աշխատանքի համար։ Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ աշխատանքի արդյունքը, օրինակ՝ զեկույցը, վերաբերում է հենց այն մարմնի գործունեությանն ու կատարած աշխատանքներին, որի հետ ՄԻՊ աշխատակազմը համագործակցում է։ Մնացյալ դեպքերում ավելի քան խրախուսելի է պետական այլ ռեսուրսների և մարմինների հետ հասցեական համագործակցությունը։

ՄԻՊ մանդատի շրջանակում փաստահավաքություն անցկացնող անձը կարող է լուսանկարահանել դեպքի վայրում գտնվող իրերը՝ լրացուցիչ ապացույցի տեսքով ներկայացնելու, զեկույցներում ներառելու նպատակով: Եթե ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչները դեպքի վայր են ժամանել մինչև քննչական մարմինների հայտնվելը, և կա ապացույցը կորցնելու վտանգ, հնարավորության դեպքում պետք է հավաքել իրեղեն ապացույցները՝ հետագայում դրանք իրավասու մարմիններին փոխանցելու համար:

Այլ մասնագետների, օրինակ՝ վկայություն տվող անձի բժշկի հետ համագործակցությունը

Փաստահավաքության գործընթացն էլ ավելի արժանահավատ դարձնելու, ինչպես նաև՝ հետագայում փաստերը ճիշտ համադրելու նպատակով հնարավորության դեպքում հարցազրույց անցկացրեք նաև վկայություն տվող անձի հետ առնչություն ունեցած այլ մասնագետների, օրինակ՝ վերջինիս բժշկի հետ: Եթե փաստահավաքության թեման, ենթադրենք, անձի՝ բռնության ենթարկվելուն է վերաբերում, վերջինիս բուժող բժշկի հետ հարցազրույց անցկացնելը կարող է դրական ազդեցություն ունենալ աշխատանքի արժանահավատության, փաստերը տարբեր դիտանկյուններից ներկայացնելու, տարբեր կարծիքների հավաքման և համադրման առումով:

ՄԻՊ գրասենյակը վկայություն տվող անձի բժշկի կամ դեպքի հետ առնչություն ունեցող այլ մասնագետների հետ անխոչընդոտ խորհրդակցության իրավասություն ունի: Սակայն, ընդհանուր կանոնի համաձայն (օրինակ՝ եթե հասարակական կազմակերպություններն են փաստահավաքություն իրականացնում), անհրաժեշտ է անձի համաձայնությունը՝ իրեն առնչվող գաղտնիքը (օրինակ՝ բժշկական) երրորդ կողմին (տվյալ դեպքում՝ փաստահավաքություն իրականացնող անձին) տրամադրելու համար:

Ինչ անել, եթե տրամադրված տեղեկությունն ակնհայտ կեղծ է կամ հակասում է այլ աղբյուրներից ստացված տեղեկություններին

Եթե հարցազրուցավարը նկատում է, որ վկայություն տվող անձի կողմից տրամադրված տեղեկությունն ակնհայտ կեղծ է, կամ տարբեր անձանց կողմից տրամադրված տեղեկությունները միմյանց հակասում են, պետք է իրավիճակը կարգավորել հետևյալ քայլերը կատարելու միջոցով.

- Պահպանել չեզոքություն, հանգստություն և ցույց չտալ անվստահություն տրամադրված տեղեկության նկատմամբ,
- Տալ լրացուցիչ բաց հարցեր՝ պարզաբումներ և այլ մանրամասներ ստանալու նպատակով (հնարավոր է՝ տեղեկության հակասականությունը կամ իրականությանը չհամապատասխանելը թյուրիմացության արդյունք է),
- Իրականացնել խաչաձև ստուգում՝ ստացված տեղեկությունը համադրելով այլ աղբյուրների և հասանելի տվյալների հետ,
- Գրանցել անհամապատասխանությունները կամ կեղծ տեղեկությունները հստակ և օբյեկտիվ կերպով,
- Փորձել հասկանալ կեղծ տեղեկություն տրամադրելու դրդապատճառները,
- Անհրաժեշտության և հնարավորության դեպքում հավելյալ հարցազրույցներ անցկացնել տվյալ տեղեկությունը տրամադրող անձի/անձանց հետ,
- Անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ իրականացնել նաև այլ անձանց հետ:

Վերոնշյալ գործողությունների ցանկը սպառիչ չէ և կախված է նաև հարցազրույցավարի մասնագիտական կարողություններից ու հմտություններից:

Ամեն դեպքում, օբյեկտիվության պատշաճ մակարդակ ապահովելու նպատակով անհրաժեշտ է ամփոփիչ զեկույցի մեջ ներառել նաև այն տեղեկությունները, որոնք, թեև տրամադրվել են անձի կողմից, սակայն փաստահավաք խմբի կողմից գնահատվել են որպես կեղծ: Զեկույցում պետք է նշել, որ ստացվել է նաև տվյալ տեղեկությունը (առանց մատնանշելու տեղեկությունը տրամադրած անձի անհատականացնող տվյալները), սակայն վերջինս, համադրվելով փաստահավաք խմբի կողմից հավաքված, ինչպես նաև՝ վերաբերելի այլ տեղեկատվության հետ, հերքվել է կամ գնահատվել է որպես իրականությանը չհամապատասխանող (կամ՝ մասամբ համապատասխանող):

Ինչպե՞ս ապահովել հավաքված տեղեկատվության օրինականությունն ու արժանահավատությունը

- Նշումներ արեք աշխատանքի բոլոր փուլերում՝ հավաստիության հետ կապված որևէ խնդրի չբախվելու համար (օրինակ, եթե հարցազրույցի մասնակից անձը կարդալու հետ կապված սահմանափակումներ ունի և պետք է իր տրամադրած տեղեկատվությունը վերընթերցեք հաստատման համար, անպայման այդ մասին նշում արեք՝ հետագայում այդ հանգամանքը հավաքված տեղեկատվության մեջ ներառելու նպատակով):

- Եթե ձայնագրում եք հարցազրույցը և ընթացքում պետք է ընդմիջում անեք, հավաստիացեք, որ ձայնագրության մեջ այդ մասին հայտարարում եք (ինչպես ընդմիջումից առաջ, այնպես էլ հետո)։ Սա ապահովում է հավաքված տեղեկատվության օրինականության հետ կապված խնդիրների բացառումը։
- Ուշադրություն դարձրեք անօրինական մեթոդներով փաստերի հավաքման հատկանիշներին՝ խուսափելու ձեր կողմից հավաքված տեղեկատվության՝ օրինականությանն առնչվող հնարավոր խնդիրներից (օրինակ, տեղեկատվության հավաքումը չի կարող օրինական համարվել, եթե այն ստացվել է ճնշումների, խոշտանգումների, սպառնալիքի ներքո)։ Հիշեք, որ ձեր կողմից հավաքված տեղեկատվության հավաստիությանն ու **օրինականությանը վերաբերող ցանկացած ողջամիտ կասկած ուղիղ ազդեցություն կարող է ունենալ տեղեկատվության հետ առնչություն ունեցող այլ փաստերի վրա և՝** դիտարկելով դրանք որպես «թունավոր ծառի պտուղ» (fruit of poisonous tree)։

Ի՞նչ է «թունավոր ծառի պտուղը»

«Թունավոր ծառի պտուղ» է համարվում **այն ապացույցը, որը ստացվել է անօրինական գործողություն կատարելու միջոցով:** Ներկայացված փաստարկը դատարանի կողմից կարող է անընդունելի համարվել՝ հաշվի առնելով վերջինիս ստացման հանգամանքները։ Օրինակ, եթե ձեզ կանգնեցնում է ճանապարհային ոստիկանությունը և մեքենայի զննության ընթացքում որևէ՝ օրենքով չթույլատրված իր է հայտնաբերում, դա բավարար ապացույց չէ ձեզ պատասխանատվության ենթարկելու համար. առգրավված իրը համարվում է «թունավոր ծառի պտուղ», եթե զննություն անցկացնելու գործողությունն ի սկզբանե ոչ իրավաչափ է եղել։

1.5 Արհեստավարժություն և հարգանք

- Միշտ գործեք արհեստավարժությամբ, բարեվարքությամբ, հարգանքով և ապրումակցմամբ։ Հիշեք մշակութային զգայունության և խոցելիության մասին։
- Երբեք մի վճարեք կամ որևէ այլ վարձատրություն մի առաջարկեք տեղեկատվություն տրամադրելու դիմաց։

2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Վաղ նախապատրաստում

Հարցազրույցին պատշաճ նախապատրաստվելը կարող է օգնել վկայություն տվող անձին՝ վերհիշելու տրամադրվող տեղեկատվության մանրամասները և վերականգնելու կարևոր դետալներ: Մինչդեռ ոչ արհեստավարժ աշխատանքը կարող է շոշափելի վնասներ հասցնել թե վկայություն տվողին, թե հավաքված տեղեկատվության կիրառելիությանն ու արժանահավատությանը:

Հարցազրույցին պատրաստված ներկայանալը դրական ազդեցություն կունենա վկայություն տվողի անվտանգության, պաշտպանվածության, փոխադարձ հարգանքի և կանխատեսելիության զգացողության վրա: **Կարևոր է նախապես քննարկվող թեմաների «կմախք» ունենալը:**

Փաստահավաք աշխատանքից առաջ հաշվի առեք **հնարավոր լեզվական արգելքների առկայությունը,** որոնց դեպքում կարող է թարգմանչի ծառայությունների անհրաժեշտություն առաջանալ: Նաև կարևոր է համոզվել, որ **վկայություն տվող անձը հաշտ է ձեր՝ թարգմանչի ընտրության հետ:**

Կարող եք վկայություն տվողին հնարավորություն տալ ընտրելու սեփական պատմության տրամադրման ձևաչափը: Օրինակ, եթե վերջինիս համար ավելի հարմար տարբերակ է **սեփական մտքերը գրի առնելը, կարող եք փաստահավաքության այդ մեթոդը ևս հաշվի առնել**:

Նախքան հարցազրույցը կարող եք ունենալ քննարկման արժանի թեմաների գրավոր ձևակերպում, որը հարցազրույցի ժամանակ ձեզ «կհուշի» կարևոր թեմաների շրջանակը: Այնուամենայնիվ, հաշվի առեք, որ հոգեկան տրավմայի ենթարկված անձի հետ քննարկման շրջանակում կարող է այնքան էլ տեղին չլինել հստակ հարցաշարին հետևելու մեթոդը: Տրավման տարատեսակ ազդեցություններ կարող է ունենալ անձի հիշողության, փաստերի վերարտադրման գործընթացների վրա. այդ պատճառով **պետք է պահպանել ճկունություն՝ յուրաքանչյուր անձին անհատական մոտեցում ցուցաբերելու միջոցով:** Կարող եք պահպանել քննարկվելիք թեմաների շրջանակը՝ փոփոխելով հարցերի հերթականությունը, ավելացնելով կամ պակասեցնելով հարցեր:

Փաստահավաք աշխատանքը պետք է վկայություն տվողին հնարավորություն ընձեռի վերարտադրել իր վերապրածը՝ իր համար հարմար, ընդունելի ձևով: Այդ պատճառով, ձեզ մոտ առկա հարցաշարն ընկալեք որպես ուղեցույց՝ **հարցազրույցի ընթացքն ուղղորդող, կարևոր թեմաների մասին հիշեցնող հուշաթերթիկ:**

Համոզվեք, որ ձեր կողմից **հնչեցված հարցերը մեղադրական ենթատեքստ չեն պարունակում:** Տրավմատիկ փորձառություն ունեցող անհատը, հնարավոր է, չկարողանա, և պարտավոր էլ չէ բացատրություն տալ իր՝ այս կամ այն իրավիճակում տրավմատիկ էպիզոդին արձագանքի ձևի համար: Մեղադրական ենթատեքստ ունեցող հարցերը կարող են կրկնակի տրավմայի ենթարկել անձին (օրինակ՝ «իսկ այդ իրավիճակում ինչո՞ւ այսպես չարեցիք» կամ «ինչո՞ւ այսպես վարվեցիք»):

Անձի վկայությունն առաջին կամ երրորդ դեմքով գրելու առանձնահատկությունները

Կախված նրանից, թե ինչ նպատակով եք կատարում փաստահավաքությունը, կարող եք որոշակիացնել վկայության գրի առնման մեթոդը: Որոշեք, թե արդյոք վկայության արձանագրությունն առաջին դեմքով եք գրի առնելու, որի դեպքում վերջում անհրաժեշտ է ունենալ վկայություն տվող անձի անուն-ազգանուն և ստորագրություն, թե գրելու եք երրորդ դեմքով՝ վկայության արդյունքում հավաքված տեղեկատվությունը վերարտադրելով ձեր մեթոդով:

Տարբեր միջազգային կառույցներ և դատարաններ այս հարցի շուրջ տարբեր մոտեցումներ ունեն: Միջազգային արդարադատական մեխանիզմներից Հայաստանի համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում թե Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը (ՄԻԵԴ), որի հետ ՀՀ-ն առնչվելու բազմամյա փորձ ունի, և թե ՄՔԴ-ն, որի հիմքում ընկած կանոնադրությունը՝ Հռոմի ստատուտը, Հայաստանը բոլորովինս վերջերս է վավերացրել: ՄՔԴ-ն միջազգային ճանաչում ունեցող այն կառույցներից է, որը զբաղվում է անհատների կողմից իրականացված այնպիսի հանցագործությունների քննությամբ, ինչպիսիք են՝ ցեղասպանությունը, պատերազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները, և ագրեսիայի հանցագործությունը (ՄՔԴ-ի և դրա իրավասության ներքո քննվող հանցագործությունների մասին ավելին՝ https://cutt.ly/3wBgvlsh):

ՄԻԵԴ համար ընդունելի են առաջին դեմքով ներկայացված արձանագրությունները:

Սրանց պատճառները կարող են տարբեր լինել: Օրինակ՝ մի մոտեցման համաձայն, «ես», «մենք» եզրույթներով գրված արձանագրությունները կարող են լրացուցիչ «կյանք» հաղորդել անձի պատմությանը, ընդգծել, որ դեպքի հետևում մարդկային կյանք, և, հնարավոր է, ոտնահարված իրավունքներ կան: Առաջին դեմքով գրված վկայությունները կարող են ապահովել պատմության եզակիությունը հատկապես այն դեպքերում, երբ նույն թեմայի շուրջ մի քանի անձից եք պատրաստվում հարցազրույց վերցնել: Այս կերպ վկաներից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա միջազգային կառույցին ներկայացնելու հենց իր պատմությունը՝ իր իսկ բառերով:

Առաջին դեմքով գրված վկայությունը պետք է պարունակի այն բառապաշարը, որն անձը օգտագործել է՝ իրավական տերմինաբանության և խոսույթի փոխարեն, և գրված լինի վկայություն տվողի համար հասկանալի լեզվով:

Սա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ պատրաստում եք վկայություն տված տարբեր անձանց արձանագրություններ՝ նույն իրավիճակի մասին: Հետագայում դատարանը կամ վկայությունն օգտագործող այլ իրավասու մարմինները կարող են թերահավատորեն մոտենալ նույն բառապաշարը պարունակող, տարբեր մարդկանց արձանագրություններին (հատկապես այն դեպքում, եթե վկայություն տվողներն իրավիճակին բախվել կամ դրա մասին իմացել են տարբեր տեղերից կամ իրարից տարբերվող ձևով): Պետք չէ պատրաստել մեկ ունիվերսալ (համանման, կրկնվող) արձանագրություն՝ բոլորի համար:

Համոզվեք, որ արձանագրությունն իր մեջ ներառում է բոլոր կարևոր թեմաները՝ ներառյալ այն փաստարկները, որոնք կարող են օգնել պարզ, հասկանալի կապ հաստատել ենթադրյալ խախտման/հանցագործության և վկայություն տվողի կրած վնասների միջև:

ՄՔԴ-ն նախապատվությունը տալիս է երրորդ դեմքով գրված վկայություններին:

Երրորդ դեմքով գրի առնելու առանձնահատկություններից կարող է լինել վկայության օբյեկտիվության և անաչառության ապահովումը: Առանց անձի մատնանշման, երրորդ դեմքով գրված վկայությունները կարող են չեզոքության ապահովման լրացուցիչ գործոն դիտարկվել: Երրորդ դեմքով գրված վկայությունները հնարավորություն են տալիս դատարանին հետագայում՝ ըստ անհրաժեշտության, անձին ներգրավել դատական գործընթացներում, մինչդեռ առաջին դեմքով ներկայացվող պատմությունները հիմնականում այն կառույցների համար են, որոնք գործի մանրամասների վերաբերյալ ինքնուրույն հետաքննություն չեն իրականացնելու:



- Հետազոտեք ձեր գործառական միջավայրը՝ ուշադրություն դարձնելով ներգրավված կողմերին և հնարավոր խոչընդոտներին, փաստահավաք աշխատանքի մասնակիցների խոցելիությանը, ընդհանուր սոցիալ-մշակութային, քաղաքական և կրոնական համատեքստին:
- Սահմանեք ձեր մանդատը, նպատակները և առաջնահերթությունները: **Որոշեք այն փաստերի աշխարհագրական ու ժամանակային շրջանակը, որոնք ցանկանում եք փաստաթղթավորել: Դրան համապատասխան՝ առաջնահերթություններ սահմանեք** և պլանավորեք գործունեությունը:
- Քարտեզագրեք այլ անհատների ու կազմակերպությունների նմանատիպ այլ նախաձեռնությունները՝ նրանց հետ համագործակցելու համար: Գնահատեք, թե **ինչ տեղեկատվություն է արդեն հավաքվել ուրիշների կողմից և դրա հիման վրա հստակեցրեք ձեր գործունեության թիրախները:**
- Ապահովեք համապատասխան սարքավորումներ, ճամփորդական և կացարանին առնչվող պայմանավորվածություններ և անվտանգ հաղորդակցություն:

2.2 Ռեսուրսներ

Հնարավորինս հաշվի նստեք մշակութային և սոցիալական արգելքների հետ։ Օրինակ, վկայություն տվողի համար կարող է անհարմարություն ստեղծել հակառակ սեռի իրավապաշտպանի հետ հարցազրույցը։ Վկայություն տվողին հնարավորություն ընձեռեք խնդրելու աջակցող անձի (օրինակ, ընտանիքի անդամի կամ սոցիալական աշխատողի) ներկայություն։

- Զգուշորեն ընտրեք և պատրաստեք ձեր թիմը (հաշվի առեք աշխատանքում ներգրավված անձանց սեռը, քաղաքացիությունը, էթնիկ պատկանելությունը, մշակույթը և կրոնը)։
- Համոզվեք, որ ձեր թիմն ունի համապատասխան հմտություններ, կարողություններ և վերապատրաստում։
- Անհրաժեշտության դեպքում փաստահավաք աշխատանքներում **հոգեբան և երեխաների հետ աշխատանքի մասնագետ ներգրավեք։**
- Իրականացրեք **ստուգման (վեթինգ) գործընթաց՝ թիմի բոլոր անդամների համար։** Հատուկ ուշադրություն դարձրեք վերջիններիս անաչառության վրա հնարավոր ազդեցություն ունեցող կամ անվտանգությանն (թե՛ իրենց, թե՛ վկայություն տվողների) առնչվող հանգամանքներին։
- Միջնորդներին և թարգմանիչներին տեղեկացրեք իրենց դերի և պարտականությունների, անվտանգության և գաղտնիության կարևորության և դատական գործընթացներում նրանց հնարավոր ներգրավվածության մասին։

Տեխնիկական հագեցվածությունը՝ փաստահավաք առաքելության շրջանակում

Փաստահավաք առաքելությունը պահանջում է մանրակրկիտ պլանավորում՝ անհրաժեշտ տեղեկատվության արդյունավետ հավաքումն ապահովելու համար։ Այս փուլը ներառում է, ի թիվս այլնի, փաստահավաք առաքելություն իրականացնող աշխատանքային խմբի տեխնիկական հագեցվածության անհրաժեշտ մակարդակի նախնական պլանավորում։ Կախված տեղի ունեցած իրադարձությունից՝ դեպքի վայրի զննությունն արդյունավետ իրականացնելու համար կարող են պահանջվել տարբեր տեսակի սարքեր, հարմարանքներ, տեխնիկա, և այլն։ Ստորև ներկայացված է աշխատանքային խմբին անհրաժեշտ սարքավորումների ոչ սպառիչ ցանկը.

Նոթբուքեր և/կամ պլանշետներ

Նշումներ անելու և ուսումնասիրություններ կատարելու համար

Սմարթֆոններ

Հաղորդակցության, լուսանկարներ և/կամ տեսանյութեր անելու, հարցազրույցներ ձայնագրելու և առցանց ռեսուրսներ մուտք գործելու համար

Թվային ձայնագրիչներ

Հարցազրույցների, հանդիպումների կամ կարևոր խոսակցությունների ձայնագրման համար





Թվային / սմարթֆոնների տեսախցիկներ

Տեսողական ապացույցներ նկարահանելու, գտնվելու վայրերը փաստաթղթավորելու կամ կարևոր մանրամասներ գրանցելու համար

GPS սարքեր կամ հավելվածներ

Ուսումնասիրվող տեղանքի տեղորոշման և քարտեզագրման համար



Հեռադիտակ և/կամ խոշորացույց

Հեռավորության վրա գտնվող տեղանքը /օբյեկտները դիտելու կամ փոքր առարկաները ավելի մոտիկից զննելու համար

Նոթատետրեր և գրենական պիտույքներ

Անհրաժեշտ են կապի միջոցների, սարքավորումների մարտկոցների հետ կապված խնդիրների կամ անսարքության և համանման այլ դեպքերում

Լապտերներ կամ լուսարձակներ

Թույլ լուսավորված տարածքներն ուսումնասիրելու կամ գիշերային ժամերին աշխատելու համար





Արտաքին մարտկոցներ (power banks)

Հոսանքի վարդակներին հասանելիության սահմանափակության պայմաններում էլեկտրոնային սարքերը լիցքավորված պահելու համար

Առաջին բուժօգնության հավաքածու (First Aid Kit)

Տեղանքի զննության ընթացքում անվտանգությունն առաջնային է, ուստի հիմնական բժշկական պարագաները ձեռքի տակ մշտապես ունենալը կարևոր է

Ուղեցույցներ կամ տեղեկատու նյութեր

Կախված փաստահավաք առաքելության բնույթից՝ ճշգրիտ տեղեկատվություն հավաքելու համար կարող են անհրաժեշտ լինել մասնագիտացված ուղեցույցներ կամ այլ տեղեկատու նյութեր

Մասնագիտացված սարքեր

Եթե փաստահավաք առաքելությունը ներառում է շրջակա միջավայրից տվյալների հավաքում, ապա կարող են անհրաժեշտ լինել մասնագիտացված հատուկ սարքավորումներ, ինչպիսիք են, օրինակ՝ ջերմաչափերը, խոնավաչափերը կամ այլ սենսորները





Տվյալների պահեստային պահպանման սարքեր (Backup storage devices)

Փաստահավաք առաքելության ընթացքում հավաքված տվյալների և տեղեկատվության ապահով պահպանման համար

Թարգմանչական սարքեր/հավելվածներ կամ լեզվական ուղեցույցներ

Եթե փաստահավաք առաքելությունը ներառում է տարբեր լեզուներով հաղորդակցվող մարդկանց հետ շփվելը, թարգմանչական սարքերը/հավելվածները կամ լեզվական ուղեցույցները կարող են օգտակար լինել



Պաշտպանիչ հանդերձանք

Կախված փաստահավաք առաքելության բնույթից՝ անձնական անվտանգության համար կարող են պահանջվել պաշտպանիչ միջոցներ, ինչպիսիք են, օրինակ՝ ձեռնոցները, դիմակները, անվտանգության ակնոցները կամ սաղավարտները

Շարժական WiFi մոդեմ

Մշտապես կապի մեջ մնալու և առցանց ռեսուրսներից օգտվելու համար

Անհրաժեշտ այլ պարագաներ. չափիչ ժապավեններ, քանոններ, կողմնացույցներ կամ առաքելության նպատակներին հատուկ այլ գործիքներ:

2.3 Անվտանգություն

- Համոզվեք, որ ձեր գործունեությունը ձեր անձնակազմին, տեղեկատվություն տրամադրող անձանց, թարգմանիչներին և միջնորդներին, տուժածներին և ցանկացած այլ անձի վտանգի չի ենթարկում:
- Նույնականացրեք սպառնալիքի աղբյուրները (կողմերին) և փաստահավաք գործընթացում ներգրավված անձանց վնաս պատճառելու՝ վերջիններիս կարողության աստիճանը:
- Հաշվի առեք, ի թիվս այլ հանգամանքների, վրեժխնդրության, ահաբեկման, ճնշումների, կաշառքի առաջարկման հավանականությունը:
- Իրականացրեք ռիսկերի գնահատումներ և կիրառեք մեղմացնող միջոցներ (կանխարգելիչ և ռեակտիվ)՝ ռիսկի մակարդակի նվազեցման համար:
- Մի ներգրավվեք այնպիսի փաստահավաք գործողություններում, որտեղ ռիսկերը չեն կարող հասցվել ընդունելի մակարդակի:

2.4 Գաղտնիություն

Անհրաժեշտ գործողություններ ձեռնարկեք՝ հավաքված տեղեկատվության պահպանման անվտանգությունն ապահովելու ուղղությամբ (օրինակ՝ գաղտնիության ապահովման նպատակով տեղեկատվության հատուկ կոդավորում, անվտանգ հաղորդակցություն, և այլն)։ Հավաքված տեղեկատվության՝ այլ անձանց տրամադրումը պետք է հիմնված լինի ծայրահեղ անհրաժեշտության սկզբունքի վրա։

- Փաստահավաք գործընթացը կողմնակի անձանց հետ մի քննարկեք։
- Հավաքված **տեղեկատվությունը և աղբյուրները խիստ գաղտնի պահեք:**
- Համոզվեք, որ աշխատանքում ներգրավված բոլոր մասնագետները պատշաճ տեղեկացված են գաղտնիությանն առնչվող պահանջների մասին, ինչպես նաև՝ **տիրապետում են տեղեկատվության գաղտնիության ու պաշտպանության ընթացակարգերին:**

2.5 Փոխանցվող տրավմա

Տրամվատիկ էպիզոդներ վերապրած անձանց հետ աշխատող մասնագետների համար կարևոր է հոգեկան տրավմաների առանձնահատկությունների մասին տեղեկացվածությունը, քանի որ տրավմա վերապրած մարդիկ, շատ հաճախ, փաստահավաքության ընթացքում ևս «բուժման» և վերականգնման փուլում կարող են գտնվել։ Հարցազրուցավարի՝ տրավմատիկ սթրեսի մասին բավարար պատկերացումը վերջինիս կարող է օգնել վկայություն տվողի համար հարգանքի և մարդասիրության վրա հիմնված միջավայր ստեղծել։

Տրավմատիկ սթրեսի և հոգեբանության մասին բավարար պատկերացումն անհրաժեշտ է նաև սեփական անձի մասին հոգ տանելու համար ևս։ Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են այն մասին, որ տրավմատիկ իրադարձություններին առնչվող մասնագետները, շատ հաճախ, իրենց կյանքի վրա բացասական անդրադարձներ ևս ունենում են։ Նման մասնագետների մոտ կարող են ի հայտ գալ սթրեսին առնչվող մի շարք ախտանիշներ, ինչպիսիք են՝ անքնությունը, կպչուն մտքերը, գերզգայունությունը։

- Ուրիշներին վերաբերող բռնությանը, տառապանքին և տրավմային շարունակաբար առնչվելու արդյունքում դուք **ինքներդ կարող եք տրավմայի ենթարկվել:**
- Ուսումնասիրեք **փոխանցվող տրավմային առնչվող ախտանիշները՝ ձեզ**

և ձեր գործընկերների մոտ դրանք նույնականացնելու համար:

- **Սահմանեք տրավմայի հաղթահարման մեխանիզմներ** և հավաքագրեք այն ծառայություններն ու մասնագետներին, որոնք կարող են աջակցություն ցուցաբերել:

Սուպերվիզիայի նշանակությունը փաստահավաք առաքելության շրջանակում

Սուպերվիզիայի պրակտիկայի ներդրումը կազմակերպության աշխատանքներում կարող է նպաստել ինչպես գործունեության արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ՝ առանձին աշխատակիցների հուզական վիճակի բարելավմանն ու մասնագիտական աճին:

Սուպերվիզիան համագործակցային գործընթաց է, որի ընթացքում սուպերվիզորը (սուպերվիզիա իրականացնող մասնագետ) վարչական, կրթական և աջակցային մեթոդների կիրառման միջոցով նպաստում է սուպերվիզիա ստացող մասնագետի մասնագիտական աճին և նրա կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

Վարչական սուպերվիզիան վարչական մեթոդների կիրառման գործընթաց է, որը կենտրոնանում է սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի (սուպերվի/աշխատակից) կողմից աշխատանքային պարտականությունների կատարման վրա և գնահատում աշխատակցի գործողությունների համապատասխանությունը աշխատանքային պայմանագրի դրույթներին:

Կրթական սուպերվիզիան սուպերվիզիայի ծառայություններից օգտվող մասնագետի՝ աշխատանքի ընթացքում կիրառվող գիտելիքների և հմտությունների զարգացման՝ նոր մեթոդների և տեխնոլոգիաների յուրացման գործընթաց է: Այն բնութագրվում է պրակտիկ խորհրդատվության անհատականացման բարձր մակարդակով (այսինքն՝ ուղղված է անհատական կրթական որոշակի կարիքների բավարարմանը):

Աջակցային սուպերվիզիան աշխատանքային սթրեսի, մասնագիտական լարվածության և այլ տեսակի սթրեսային իրավիճակների և դրանց արդյունք հանդիսացող հուզական այրման կանխարգելմանը/ հաղթահարմանը կամ մեղմացմանն ուղղված, փոխադարձ վստահության մթնոլորտում ընթացող գործընթաց է (ընդգծված անհատական մոտեցմամբ)[3]:

3. Մեջբերումները՝ Սուպերվիզիան սոցիալական աշխատանքում / Ուսումնական ձեռնարկ: Մ. Անտոնյան, Ա. Սահակյան, Ա. Խաչատրյան, Ռ. Մարկոսյան, Ն. Գեղամյան, Ա. Ոսկանյան: Երևան, 2016, ԵՊՀ հրատ., https://cutt.ly/7wBp7GAr

3. ԽՈՑԵԼԻ ԱՆՁԻՆՔ

3.1 Ընդհանուր սկզբունքներ

Խոցելիություն անվանում են այն վիճակը, երբ **տարբեր կարողությունների սահմանափակության պատճառով կամ որոշակի սոցիալական պայմաններ առաջանալու հետևանքով մարդկանց և սոցիալական խմբերի պահանջմունքների բավարարումը վտանգվում է:**

Օրինակ՝ խոցելիությունը կարող է պայմանավորված լինել ֆիզիկական կարողությունների սահմանափակմամբ՝ բնածին և ձեռքբերովի: **Խոցելիություն կարող է ի հայտ գալ սեռային, տարիքային, ազգային և այլ խտրականության հետևանքով:**

Սոցիալական խոցելիությունը կարող է առաջանալ ոչ ճիշտ քաղաքականության, հասարակության մեջ առկա կարծրատիպերի պատճառով, և այլն:

Խոցելի անձինք կարող են համարվել.

- Երեխաները (մինչև 18 տարեկան),
- Տարեցները,
- Սեռական հանցագործությունների, խոշտանգումների ենթարկված անձինք,
- Հաշմանդամություն ունեցող կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք,
- Անազատության մեջ գտնվող անձինք,
- Հղի կանայք,
- Գրագիտության շեմը չհաղթահարած անձինք,
- Ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող անձինք,
- Տնտեսական ոչ բարվոք պայմաններում ապրող անձինք,
- Թմրանյութերից կախվածություն ունեցող անձինք,
- Որոշ դեպքերում կանայք, երբ օրինակ, փաստահավաքությանը մասնակցելիս պետք է թույլտվություն հարցնեն իրենց կողակցից:

Այս ցանկը, սակայն, սպառիչ չէ. խոցելիությունը կարող է այլ դրսևորումներ ևս ունենալ՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ համատեքստերով:

Խոցելի անձանց հետ ցանկացած հաղորդակցություն պետք է հիմնված լինի «մի վնասիր» և «տեղեկացված համաձայնություն» սկզբունքների վրա։ Փաստահավաք աշխատանքներում խոցելի անձանց մասնակցությունը կարող է **կրկնակի տրավմայի** պատճառ դառնալ։

- Խոցելի անձանց հետ ձեր առնչությունը պահպանեք նվազագույն մակարդակի վրա (այնքան, որքան անհրաժեշտ է ձեր մանդատի իրացման համար)։
- Մի ներգրավեք և մի հավաքեք տեղեկատվություն խոցելի անձանցից, քանի դեռ.
  - Տեղեկատվությունը խիստ անհրաժեշտ չէ,
  - Չկա որևէ օբյեկտիվ հավելյալ արժեք,
  - Նույն տեղեկատվությունը հնարավոր չէ ստանալ այլ աղբյուրներից։
- Խոցելիությունը պարզելիս անհրաժեշտ է **անհատականացված մոտեցում կիրառել։** Թիմում ունեցեք մասնագետներ կամ վերապատրաստված մարդիկ, որոնք կկատարեն խոցելիության գնահատում։ Անհրաժեշտության դեպքում խորհրդակցեք որակավորված մասնագետների հետ։ Խոցելիության գնահատումն անհրաժեշտ գործընթաց է՝ հասկանալու համար, թե արդյոք անձը կարողունակ է տեղեկացված համաձայնություն տրամադրել, թե՝ ոչ։ Գնահատման այլ նպատակներից են նաև փաստահավաքության՝ անձի վրա ունեցած բացասական ներազդեցության բացառումը, անհրաժեշտ օգնության և աջակցության հնարավոր տրամադրումը։
- Երեխաների և այն անձանց համար, որոնք տրավմայի նշաններ ունեն, դիմեք կլինիկական հոգեբանների աջակցությանը։
- Փաստահավաք գործողությունները պետք է դադարեցվեն կամ հետաձգվեն, եթե դրանք կարող են լրացուցիչ վնաս հասցնել մարդուն։
- Խոցելիության գնահատումը պետք է.
  - Ներկայացնի վկայություն տվողի ֆիզիկական և հոգեկան առողջության աստիճանը,
  - Հաշվարկի անձի՝ տրավմայի ենթարկված լինելու հավանականությունը,
  - Որոշակիացնի պլանավորվող փաստահավաք աշխատանքի տեսակն ու հաշվարկի՝ արդյոք անձը պատրաստ է այդ փորձառությանը,
  - Նույնականացնի այն միջոցները, որոնց շնորհիվ անձի վրա բացասական ներգործությունը հնարավոր կլինի նվազագույնի հասցնել,
  - Վերհանի անհրաժեշտ ֆիզիկական և հոգեբանական աջակցության տեսակները։

3.2 Տրավմա

Վկայություն տալն անձի համար կարող է մի շարք ռիսկեր պարունակել, որոնցից գլխավորներից է **կրկնակի տրավմայի ենթարկվելու վտանգը:** Տրավմայի ազդեցությունն ու հետևանքները կախված են անձից, բայց դեպքերի մեծ մասում այն առաջացնում է երկարաժամկետ հոգեբանական, առողջական և սոցիալական ներազդեցություններ: Տրավմա ստացած անձինք կարող են հուսալիորեն ճշգրիտ տեղեկատվություն հաղորդել, սակայն տրավման կարող է ազդել հիշողության վրա:

Տրավման իր հետ կատարված դժբախտ կամ ցավոտ փորձառությանն անձի հոգեկան արձագանքն է: Տրավմատիկ էպիզոդները խիստ սուբյեկտիվ են. այն, ինչ տրավմատիկ է մեկ անձի համար, կարող է մյուսի վրա լիովին այլ ազդեցություն ունենալ: Ամեն դեպքում, տրավման ի հայտ է գալիս այն պարագայում, երբ անձի հոգեբանությունն այլևս ունակ չէ հաղթահարել իր հետ տեղի ունեցողը և վերջինիս վրա է թողնում ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, զգայական ներազդեցություններ: Փաստահավաք աշխատանք իրականացնող անձանց համար կարևոր է տարբերել տրավմայի մի քանի տեսակներ՝ հետագայում որոշակիացնելու վկայություն տվող անձանց հնարավոր հոգեկան և ֆիզիկական վիճակները:

- Մեկ դեպքից տրավման (single incident trauma) ի հայտ է գալիս միանգամյա տրավմատիկ էպիզոդի ենթարկվելու արդյունքում, ինչպես օրինակ՝ սեռական բռնությունը, ավտովթարը, սիրելի անձի կորուստը, և այլն:
- Կոմպլեքս տրավման (complex trauma) առաջանում է տևական ժամանակ տրավմատիկ էպիզոդների ականատես լինելու արդյունքում, ինչպիսին օրինակ՝ ընտանեկան բռնությունն է:
- Զարգացման տրավման (developmental trauma) ի հայտ է գալիս շարունակական բռնության և մերժված լինելու արդյունքում՝ ներազդելով երեխայի զարգացման վրա:
- **Կոլեկտիվ տրավման (community trauma) ազդեցություն է ունենում խմբի/համայնքի՝ անվտանգության, պատկանելության զգացումների վրա, ներառելով՝ խտրականություն, անհավասարություն, կազմակերպված հարձակումներ՝ խմբի անդամների նկատմամբ: Կոլեկտիվ տրավման կարող է նաև ի հայտ գալ պատմական որոշ փորձառությունների դեպքում, ինչպիսիք են՝ ցեղասպանությունը, պատերազմը, գաղութայնացումը:**

Փաստահավաքության համատեքստում մասնագետների համար կարևոր է նաև **տրավմատիկ էպիզոդների՝ մարդու ուղեղի վրա ունեցած ազդեցության հնարավոր ձևերի մասին տեղեկացվածությունը:** Հնարավոր վտանգի նույնականացման ժամանակ ակտիվանում է ուղեղի պաշտպանական սխեման: Նման դեպքում ուղեղը, սովորաբար, անցնում է «հակահարվածի», «փախչելու», «սառելու» ռեժիմների: Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ տրավմատիկ իրադարձությունների դեպքում մարդկային ուղեղը հաճախ հենց «սառեցման» մեթոդն է ընտրում: Այս պարագայում անձի համար դժվար է սթափ, գիտակցված որոշումներ կայացնելը, կամ էլ իրադարձությունների մանրամասների, հերթականության վերարտադրումը: **Անձը կարող է ունակ չլինել բացատրել իր՝ այս կամ այն պահվածքի պատճառը, ինչպես նաև՝ տրավմատիկ էպիզոդից հետո խուսափել օգնության դիմել կամ չկարողանալ վերարտադրել իրողությունների բոլոր մանրամասները:**

Մեղադրական ենթատեքստ ունեցող հարցերը կարող են ոչ միայն կրկնակի տրավմայի ենթարկել վկայություն տվող անձին, այլ նաև վերջինիս մոտ մեղքի զգացում առաջացնել: Այդպիսի հարցերը կարող են վկայություն տվողի մեջ կասկած հարուցել սեփական անձի տրամադրած տեղեկատվության հավաստիության առնչությամբ՝ այդ կերպ խաթարելով պատշաճ փաստահավաքության գործընթացը:

3.3 Խոցելի անձանց հետ հարաբերությունները

Փաստահավաքությանը նախապատրաստվելու ընթացքում և մինչև խոցելի անձանց հետ աշխատանք սկսելը համոզվեք, որ պատրաստ եք հասցեական արձագանքելու վերջիններիս հոգեբանական և ֆիզիկական կարիքներին: Կարևոր է վկայություն տվող խոցելի անձին հասցնել այն գաղափարը, որ ձեր ապրումակցումն ու օգնությունը որևէ կերպ կապ չունի տրամադրվող տեղեկատվության հետ: Այլ կերպ ասած՝ **ձեր աջակցությունը նրանց պատշաճ օգնություն ցուցաբերելու, դժվար իրավիճակներից վերջիններիս դուրս բերելու համար է, և չի պարտավորեցնում նման քայլերի դիմաց անպայման որևէ տեղեկատվություն տրամադրել:**

- Աշխատանքից առաջ ուսումնասիրեք խոցելի անձանց հետ կապված **ձեր անձնական վերապահումները՝ դրական և բացասական:**
- Եղեք ապրումակցող և հարգալից:
- Համոզվեք, որ դուք պատրաստ եք աջակցել խոցելի անձանց ֆիզիկական, հոգեբանական կամ այլ հատուկ կարիքներին:
- Պարզեք, թե արդյոք առկա են **աջակցության մեխանիզմներ,** որոնք կարող են օգտակար լինել խոցելի անձանց համար:

- Քննարկեք այն հարցը, թե որքանով է նպատակահարմար ներգրավել խոցելի անձանց փաստահավաքության մեջ՝ աջակցության համապատասխան մեխանիզմների բացակայության պայմաններում:
- Գնահատեք անձի խոցելիությունը և համապատասխանեցրեք ձեր միջամտությունը տրավմայի հնարավոր հետևանքներին (ազդեցությանը):

Ի՞նչ է ապրումակցումը
(հուն. empatheia – էմպատիա, միասին ապրել)

Հուզական վիճակ, որի դեպքում անձը զգում է/ապրում է այլ մարդու զգացածն ու վերապրածը:
Այլ անձի զգացմունքները և գաղափարները ընկալելու, հասկանալու, զգալու և դրանց արձագանքելու ունակություն:
Ըստ ամերիկյան հոգեբան Կ. Ռոջերսի, ապրումակցումը մեկ այլ անձի զգացմունքները և ներաշխարհը «կարծես» սեփականը զգալու, հասկանալու և որպես սեփականը ներկայացնելու ունակությունն է, միևնույն ժամանակ չկորցնելով «կարծես»-ի զգացողությունը:
Ապրումակցումը պետք է չշփոթել կարեկցանքի կամ խղճահարության հետ: Ապրումակցումը կենցաղային լեզվով կարելի է բնութագրել «ուրիշի դրության մեջ մտնել» արտահայտությամբ:

4. ԱՆՁԻՑ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼԸ

4.1 Ընդհանուր ուղղորդող սկզբունքներ

- Լավագույն տարբերակում անձը պետք է հարցաքննվի միայն մեկ անգամ՝ հնարավոր խախտումների և հանցագործությունների դուրս բերման համար պատշաճ եղանակով:
- Ձեր ջանքերը կենտրոնացրեք զոհերի և հնարավոր հանցագործների նույնականացման, ենթադրյալ հանցագործությունների քարտեզագրման վրա:
- Եթե որոշել եք խոցելի անձից առաջին ընդհանուր վկայություն վերցնել, ապա ստացեք այն նվազագույն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է փաստահավաքման նպատակներին հասնելու համար: Հարգեք «մի վնասիր» սկզբունքը: Մարդուց **վկայություն վերցնելն արդեն իսկ վտանգ է ներկայացնում անձի վկայության ամբողջականության (integrity) համար,** հատկապես եթե կիրառվում են հարցազրույցի անցկացման ոչ պատշաճ տեխնիկաներ:

4.2 Անձից վկայություն վերցնելու ընդհանուր նկատառումներ

- Վկայություն վերցրեք յուրաքանչյուր անձից **առանձին և անհատապես:**
- Խուսափեք արդեն վկայություն տված անձի հետ հարցազրույց անցկացնելուց (բացառությամբ այն դեպքերի, երբ կա դրա խիստ անհրաժեշտությունը):
- Երբեք **մի վճարեք և մի առաջարկեք որևէ վարձատրություն կամ որևէ այլ արտոնություն՝ անձի վկայությունը ստանալու դիմաց:**
- Ձևավորեք վստահություն: **Ակտիվ լսեք** և ցուցաբերեք **ոչ մեղադրական վերաբերմունք:** Դրսևորեք ապրումակցում (ոչ խղճահարություն), հարգանք և պահպանեք հանգստություն:
- Կանոնավոր ընդմիջումներ կատարեք՝ գնահատելու և ձեր թիմի հետ քննարկելու տվյալ անձի վարքագիծը, տրավմայի և սթրեսի նշանները և հարցազրույցի դինամիկան:

Կիրառելի՞ է արդյոք ֆոկուս խմբային քննարկումը՝ փաստահավաք գործունեության շրջանակում

Ֆոկուս խմբային քննարկումը սոցիալական հետազոտություններում առավել հաճախ կիրառվող մեթոդներից է: Այս մեթոդի միջոցով քննարկվում են տարբեր սոցիալական հիմնախնդիրներ և դրանց անհատական ընկալումներ, հավաքվում են տեսակետներ, դիտարկումներ և

առաջարկություններ՝ հարցերի լայն շրջանակի վերաբերյալ:

Սակայն ֆոկուս խմբերի տրամադրած որակական տվյալները հիմնվում են խմբային հաղորդակցության և մասնակիցների փոխազդեցության վրա: Հենց այս առանձնահատկությունն էլ սահմանափակում է մեթոդի կիրառելիությունը՝ փաստահավաք գործունեության շրջանակում: Փաստահավաքության մեջ կարևոր է անհատական փորձառության, դեպքերի ու ընկալումների հնարավորինս ճշգրիտ վերարտադրությունը՝ զերծ հնարավոր ազդեցություններից և ուղղորդումներից:

«Ակտիվ լսելու» տեխնիկան

Այս տեխնիկան օգնում է վկայություն տվողի մոտ ձևավորել զգացում, որ իրեն իրապես լսում են:

Կան ակտիվ լսելու տեխնիկայի տարբեր միջոցներ, օրինակ.

Կատարել նշումներ ոչ միայն ասվածն արձանագրելու, այլև՝ ցույց տալու համար, որ ուշադիր լսում եք:

Օգտագործել կարևորությունը շեշտող արտահայտություններ.

- *«Այո՛, կարևոր է, շարունակեք»:*

Պարզաբանել ասված խոսքը.

- *«Կարո՞ղ եք մի փոքր ավելի մանրամասն պատմել...»:*
- *«Ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք...»:*

Օգտագործել ոչ վերբալ (ոչ բառային) միջոցներ.

- *Ժպտալ:*
- *Գլխով անել:*
- *Առաջ թեքվել:*

Ցուցաբերել ուշադրություն և հետաքրքրություն՝ օգտագործելով որոշ արտահայտություններ և ձայնարկություններ.

- *Հըըմ:*
- *Հասկանում եմ:*
- *Շարունակեք:*
- *Այո, բարի:*
- *Հետաքրքիր է:*

4.3 Պլանավորում և նախապատրաստում

- Վկայություն տվող **անձի մասին նախնական տեղեկություններ հավաքեք:**
- Ճշտեք՝ արդյոք անձը ներկայացված է փաստաբանի կողմից:
- Կատարեք ռիսկերի գնահատում, նախքան կմեկնարկի շփումը:
- Պլանավորեք փաստահավաք աշխատանքը՝ սահմանելով դրա նպատակները և բոլոր կարևոր թեմաները:
- Համոզվեք, որ պահպանված են անձի վկայությունը վերցնելու պահանջվող պայմանները.
  - Վերապատրաստված և փորձառու հարցազրուցավարներ,
  - Թարգմանություն,
  - Պատշաճ կերպով ընտրված վայր՝ հարցազրույցի համար, բավարար ժամանակ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ լոգիստիկ պայմաններ:
- Ստեղծեք **ապահով, հոգատար և մեկուսի (առանձնացված) միջավայր:**
- Հեռավար փաստահավաքության տարբերակը դիտարկեք միայն այն դեպքում, երբ դեմ դիմաց հարցազրույց անցկացնելն անհնար է:

Վկայություն վերցնելու վայրը

Անձը պետք է համոզված լինի, որ կողմնակի անձինք չեն լսում իրեն:

Եթե, օրինակ, անձը երեխաների հետ է, անհրաժեշտ է ապահովել խաղասենյակ, այլապես հարցազրույցը կարող է պարբերաբար ընդհատվել:

Ցանկալի է խուսափել ֆիզիկական արգելքներից՝ ոչ վերբալ հաղորդակցության մանրամասները ևս նույնականացնելու համար: Մասնակիցների միջև եղած հեռավորությունը պետք է շատ մեծ չլինի, քանի որ դժվար կլինի նկատել անձի ժեստերն ու դեմքի արտահայտությունը, դրանց փոփոխությունները: Մեծ սեղանը կամ այլ ֆիզիկական օբյեկտները կարող են խանգարող հանգամանքներ լինել:



4.4 Ներգրավել և բացատրել

- Անձին մանրամասն բացատրեք գործընթացի նպատակը և շրջանակը:
- **Փոխհարաբերություններ կառուցեք վկայություն տվողի հետ և փարատեք նրա մտահոգությունները:**
- Ստացեք վկայություն տվող անձի կենսագրական տվյալները:
- Քննարկեք գաղտնիության, ռիսկերի և մեղմացնող միջոցառումների հարցերը:
- Անձի համար նկարագրեք գործընթացը. հարցերի տեսակները, թարգմանությունը, ընդմիջումները, տեղեկատվության հնարավոր օգտագործումը, և այլն:

4.5 Վկայություն

- Հարցադրումները պահպանեք մանրամասների (դետալայնության) նվազագույն պահանջվող մակարդակում:
- Հիմնականում **կիրառեք բաց հարցեր:** Սահմանափակեք ձևայնացված/փակ հարցերի կիրառությունը: Եթե անգամ նմանատիպ հարցեր եք տվել, հնարավորինս շուտ վերադարձեք բաց հարցերին:
- Որտեղ հնարավոր է, ժամանակագրական կառուցվածք պահպանեք:
- **Մի տվեք ուղղորդող հարցեր:** Խուսափեք բազմաթիվ ու խճճող հարցերից: Խուսափեք նույն հարցն անհարկի կրկնելուց:

- Հարցերը տվեք **չեզոք, օբյեկտիվ և փաստացի՝** հաշվի առնելով տվյալ անձի տիրապետած տեղեկատվության բնույթն ու հիմքերը:
- **Պահպանեք անձի հետ տեսողական կապը:**

ԽՈՒՍԱՓԵՔ ՀԱՐՑԵՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՍԱԿՆԵՐԻՑ

ԲԵՌՆՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Այս հարցերն ինչ-որ թաքնված միտք են արտահայտում կամ ունեն ենթատեքստ (օրինակ՝ մեղադրական):

ԿԱՄ-ԿԱՄ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՄԲ ՀԱՐՑԵՐ

Օրինակ. Այդ իրավիճակում ո՞վ աջակցեց Ձեզ՝ X-ը թե՞ Y-ը:

«ԱՅՈ/ՈՉ» ՀԱՐՑԵՐ

Միայն «Այո / Ոչ» պատասխան պահանջող հարցեր:

ՈՒՂՂՈՐԴՈՂ ՀԱՐՑԵՐ

Վերջիններս կարող են անձին հուշել պատասխանը: Օրինակ. Դուք չե՞ք կարծում, որ X-ի գործողությունները հանգեցրին այդ իրավիճակին:

ԽՃՃՈՂ ՀԱՐՑԵՐ

Մտորելու և պատասխանելու հնարավորություն չտվող հարցեր, որոնք տրվում են մեկը մյուսի ետևից:

ԱՂԱՎԱՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Անորոշ հարցադրում, որի արդյունքում անձը չի հասկանում, թե իրենից ինչ են ակնկալում: Հաճախ նախադասության սկիզբն ու ավարտը կապ չունեն իրար հետ:

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ՀԱՐՑԵՐ

Աշխատանքն իրականացնողը հարցերը ձևակերպում է ավելի շատ հետաքրքրությունից դրդված, քան՝ ելնելով փաստահավաքության նպատակից:

Բաց և փակ հարցեր

Բաց հարցերը ենթադրում են ազատ շարադրանքով պատասխան:

Փակ հարցերը ենթադրում են «Այո / Ոչ» տիպի պատասխան կամ առաջարկում են պատասխանի մի քանի տարբերակ: Օրինակ.

- «Նա քեզ սպառնացե՞լ է»:
- «Նա կանգնա՞ծ էր, թե՞ նստած»:

4.6 Ավարտ

- Փաստահավաք աշխատանքն **ավարտեք չեզոք թեմայով** և ընդգծեք անձի մասնակցության կարևորությունը:
- **Անձի համար կարդացեք իր տված վկայության՝ ձեր նշումների ամփոփագիրը, այնպես, որ ցանկացած էական սխալ կամ թյուրըմբռնում հնարավոր լինի շտկել: Հարցրեք անձին, թե ինչ տվյալներ է ցանկանում հավելել կամ ճշգրտել:**
- Վերահաստատեք տեղեկացված համաձայնությունը:
- Գնահատեք գործընթացն անձի հետ համատեղ:
- Վերահաստատեք գաղտնիության կարևորությունը և հիշեցրեք պաշտպանության ու աջակցության միջոցների մասին, որոնք կարող են կիրառվել ըստ անհրաժեշտության:
- Համոզվեք, որ անձը լավ տեղեկացված է ձեր կոնտակտային տվյալների մասին՝ հետագա հաղորդակցության ապահովման համար:

4.7 Գնահատում

- Գնահատեք.
  - անձի անվտանգությունն ու բարօրությունը,
  - տրամադրված տեղեկատվությունը և դրա նշանակությունը փաստահավաքման նպատակների տեսանկյունից,
  - փաստահավաք աշխատանքն իրականացնող անձանց կատարողականը:

4.8 Վկայության փաստաթղթավորում

- Վկայության արձանագրության մեջ **մի գրանցեք ձեր կարծիքները, մեկնաբանությունները, մտքերը կամ վերլուծությունները:**
- Որպես ընդհանուր սկզբունք՝ մի ձայնագրառեք և մի տեսաձայնագրեք գործընթացը:
- Եթե, այնուամենայնիվ, կա նման որոշում (նկարահանելու կամ ձայնագրառելու), ապա.
  - Ստացեք տեղեկացված համաձայնություն,
  - Փորձարկեք ձեր սարքավորումները,
  - Ձայնա կամ տեսանկարահանման համար հայտարարեք վայրը, ամսաթիվը և ժամը, հարցազրուցավարի և ներկաների տվյալները:

4.9 Խոցելի անձանցից վկայություն վերցնելը

- Տրավմա ստացած անձինք և երեխաները կարող են հատկապես խոցելի լինել, և նրանցից ցանկալի է վկայություն վերցնել միայն մեկ

անգամ՝ հետևելով «մի վնասիր» սկզբունքին:

- Տրավմա ունեցող անձից կամ երեխայից վկայություն վերցնելու դեպքում ստացեք հոգեբանի կամ հոգեբույժի աջակցությունը:
- Համոզվեք, որ թարգմանիչները և միջնորդները վերապատրաստված են և տեղեկացված:
- Դիտարկեք աջակցող անձի ներգրավման նպատակահարմարությունը:
- Թույլ տվեք խոցելի անձանց, որ իրենք որոշեն հանդիպման վայրը, ժամը և աջակցող անձի ներկայությունը:
- Հիմնականում ընդհանուր բնույթի հարցադրումներ կատարեք: Հնարավորինս քիչ հարցեր տվեք: Օգտագործեք հարցեր, որոնք հեշտ է հասկանալ:
- Տրավմատիկ իրադարձությունների մասին մանրամասներ պարզեք միայն այն դեպքում, եթե դա խիստ անհրաժեշտ է:
- Դադարեցրեք վկայություն վերցնելը, եթե անձը ցույց է տալիս անհանգստության նշաններ:
- Ավարտին կատարեք գնահատում, ցանկալի է՝ հոգեբանի աջակցությամբ:

4.10 Սեռական և գենդերային հիմքով հանցագործությունների զոհեր (SGBC)

- SGBC-ի զոհերը կարող են լինել խոցելի վիճակում և տրավմա ստացած: Գնահատեք նրանց խոցելիությունը:
- Եթե վստահ եք, որ SGBC-ի զոհից առաջին ընդհանուր վկայություն ստանալն անհրաժեշտ է, ապա համոզվեք, որ հարցազրույց անցկացնողներն ու թարգմանիչներն ունեն անհրաժեշտ վերապատրաստում և փորձ:
- Հարմարեցրեք հաղորդակցության ձեր միջոցներն ու լեզուն անձի **գենդերային ինքնությանն ու տեղական մշակույթին.**
  - Ուշադրություն դարձրեք զոհերի կողմից հատուկ բառապաշարի օգտագործմանը, երբ խոսում են սեռական ակտի կամ մարդու մարմնի որոշ մասերի մասին,
  - Օգտագործեք մարդու մարմնի դիագրամ,
  - Տուժողին հարցրեք ֆիզիկական իրերի (օրինակ՝ հագուստի) և բժշկական կամ դատաբժշկական այլ տեղեկատվության մասին, որը կարող էր հավաքվել բռնության վերաբերյալ:
- SGBC-ի արական սեռի զոհերի դեպքում պատրաստ եղեք լրացուցիչ ժամանակ ծախսել վստահության ձևավորման և տրավմայի (ինչը կարող է անմիջապես տեսանելի չլինել) հետ առնչվելու համար:

4.11 Երեխաներ

- Երեխաներից (մինչև 18 տարեկան) ցանկալի է վկայություն վերցնել միայն մեկ անգամ:
- Կենտրոնացեք երեխայի կենսագրական և կոնտակտային տվյալների վրա և աշխատեք նրա ծնողների, խնամակալների և բժիշկների հետ՝ արձանագրելու համար, թե ինչ կարող է պատահած լինել երեխայի հետ կամ ինչին է երեխան ականատես եղել:
- Եթե, բացառիկ հանգամանքներում, առաջին ընդհանուր վկայություն ստանալն է գնահատվում որպես **երեխայի լավագույն շահ** և դա էական նշանակութուն ունի փաստահավաքման նպատակների համար, ապա ապահովեք հետևյալը.
  - Գործեք՝ ելնելով երեխայի լավագույն շահերից,
  - Վկայությունը պետք է վերցնեն ճանաչելի փորձառություն ունեցող մասնագետները,
  - Հոգեբանը պետք է գնահատի երեխայի խոցելիությունը,
  - **Պետք է լինի երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի տեղեկացված համաձայնությունը,**
  - Երեխային անհրաժեշտ է բացատրել գործընթացը,
  - **Հնարավորության դեպքում վկայության ստացմանը պետք է ներկա լինեն ծնողները կամ օրինական ներկայացուցիչները,**
  - Անհրաժեշտ է կիրառել **երեխայի տարիքին և զարգացմանը համապատասխան լեզու,**
  - Ցանկալի է կիրառել բաց հարցեր և հնարավորինս քիչ հարցեր տալ:

Երեխայի լավագույն շահ

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

«Երեխայի լավագույն շահը» դինամիկ, բարդ, ընդգրկուն հասկացություն է, որը հնարավոր չէ վերացականորեն և օբյեկտիվ կերպով սահմանել: Այն պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ իրավիճակի, անձնական համատեքստի և երեխայի կարիքների հաշվառմամբ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 7-րդ մասի համաձայն. «Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա

լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր ԵԱՆԴ/4073/02/14 քաղաքացիական գործով կայացրած 22.07.2016թ որոշմամբ արձանագրել է, որ «երեխայի շահ» կամ «երեխայի լավագույն շահեր» հասկացություններն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվեն ու կիրառվեն հետևյալ երեք իմաստներով.

- Որպես երեխայի իրավունք,
- Որպես իրավական-մեկնաբանողական սկզբունք,
- Որպես ընթացակարգային կարգավորման կանոն[4]:

4.12 Անձինք, որոնք, հնարավոր է, հանցագործություններ են կատարել

- Իրականացրեք այս յուրահատուկ ռիսկի գնահատումը:
- **Ակտիվ կերպով մի հայցեք որևէ տեղեկություն անձի՝ հանցագործություններում ներգրավվածության վերաբերյալ:**
- Եթե անձն ինքնաբուխ և կամավոր կերպով տրամադրում է տեղեկատվություն հանցագործության մեջ իր ներգրավվածության մասին, ապա **գնահատեք անվտանգության ռիսկերը, նախքան կշարունակեք վկայություն վերցնելը:**
- Ստացված տեղեկատվությունը և հարցազրույցի այլ հանգամանքները գրանցեք անվտանգ միջավայրում: Ճշգրիտ գրանցեք անձի կիրառած ձևակերպումները:

4. Մեջբերումները՝ Երեխայի լավագույն շահերը / Ուղեցույց-ձեռնարկ: Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ): Երևան, 2022, https://cutt.ly/UwShoeXf

5. ԼՈՒՍԱ ԵՎ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ

5.1 Նախնական քայլեր

- Գնահատեք գործընթացի **անվտանգությունը և հնարավոր ռիսկերը:**
- Ստացեք այն անձանց **տեղեկացված համաձայնությունը,** ում պատրաստվում եք լուսա կամ տեսանկարահանել:
- Արձանագրեք (նկարագրեք) ֆոտո/վիդեո փաստաթղթավորման գործընթացը (Տե՛ս Հավելված 2):

5.2 Որոշեք, թե ինչ է պետք տեսա կամ լուսանկարահանել

- Նկարահանումն իրականացրեք հարցերի հետևյալ սխեմայից ելնելով. Ի՞ՆՉ – Ո՞Վ – ԻՆՉՊԵ՞Ս:

5.3 Ինչպես լուսա և տեսանկարահանումներ իրականացնել

- Գրանցեք յուրաքանչյուր նյութի (լուսանկար, տեսանյութ) նկարահանման **օրը, ժամը և վայրը:**
- Լուսանկարեք կամ տեսանկարահանեք **տարբեր դիտանկյուններից.** համայնապատկերից անցում կատարեք դեպի լայն/միջին կադրեր և մոտ կադրեր (խոշոր պլան):
- Չափերը ճիշտ արտացոլելու համար օգտագործեք քանոն (կամ այլ առարկա):
- Տեսանկարահանման ժամանակ արձանագրեք **նկարահանման վայրը, ամսաթիվը և ժամը, նկարահանող անձի և նկարահանվող անձանց անունները:**

5.4 Պահպանեք տեսանյութերը և լուսանկարները

- Ստեղծեք համապատասխան մետատվյալներ[5]՝ նկարների համար:
- Կիրառեք համապատասխան պահեստավորում և գաղտնագրում:

5. Մետատվյալները տվյալներ են տվյալների մասին: Օրինակ, եթե տվյալը լուսանկարն է, ապա մետատվյալները նկարագրում են, մասնավորապես, լուսանկարի ստեղծման ամսաթիվը և ժամը, սարքը, որով կատարվել է լուսանկարահանումը, վայրը, և այլն:

Դիակի արտաքին զննություն և լուսանկարահանում

Փաստահավաք առաքելության ժամանակ, եթե անհրաժեշտ է, որ աշխատանքային խումբն իրականացնի դիակի արտաքին զննություն, ապա պետք է հաշվի առնել հետևյալ կետերը.

- Պահպանել համընդհանուր նախազգուշական միջոցները (Universal precautions), մասնավորապես՝ մարդու արյանը կամ մարդու այլ հեղանյութերին (թուք, մեզ, թարախանյութ, և այլն) վերաբերվել այնպես, կարծես դրանք վարակիչ են ՄԻԱՎ-ով կամ արյամբ/հեղանյութով փոխանցվող այլ վարակիչ հիվանդություններով,
- Օգտագործել անձնական պաշտպանիչ միջոցներ, ինչպիսիք են ձեռնոցները, դիմակները և խալաթները՝ արյան և այլ հեղանյութերի հետ շփումը կանխելու համար։
- Ունենալ համապատասխան տեխնիկական հագեցվածություն։
- Լուսանկարահանել այն պարկը, որում տեղադրված է դիակը։
- Պարկից հանելուց հետո, լուսանկարահանել դեմքը և ուսերը։
- Լուսանկարահանել դիակի հագուստները, ինչպես նաև ցանկացած այլ իր, որը կգտնվի դիակի հագուստներում կամ գրպաններում։
- Լուսանկարահանել դիակը առանց հագուստների, բոլոր կողմերից։
- Մոտ տարածությունից լուսանկարահանել դիակի վրա առկա վերքերը, կապտուկները և/կամ խոշտանգման հետքերը, սպիերը։
- Մոտ տարածությունից լուսանկարահանել դիակի վրա առկա դաջվածքները (առկայության դեպքում), ինչպես նաև՝ այլ անհատականացնող նշանները։

Դիակների լուսանկարների օրինակները ներկայացված են **Հավելված 3-ում:**

6. ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

6.1 Հիմնական սկզբունքներ

- Իրեր և փաստաթղթեր հավաքեք միայն **բացառիկ դեպքերում,** երբ.
  - Քննիչները (պաշտոնական մարմիններ ներկայացնող) չեն ցանկանում կամ չեն կարողանում դա անել,
  - Կա ռիսկ, որ տվյալ իրը կամ նյութը կարող է փչանալ, վնասվել կամ կորել,
  - Քաջատեղյակ եք, թե ինչ ընթացակարգեր պետք է կիրառեք:
- Գրանցեք իրեղեն ապացույցներ տրամադրողի կոնտակտային տվյալները և փորձեք տեղեկացված համաձայնություն ստանալ՝ այդ ապացույցներն այլ մարմիններին փոխանցելու համար:

6.2 Գործնական խորհուրդներ

- **Լուսանկարեք իրերը տեղում, նախքան դրանք հավաքելը:**
- Կիրառեք իրեղեն ապացույցների փաթեթավորման և պահպանման պատշաճ ընթացակարգեր:
- Մի հավաքեք այնպիսի իրեր, որոնք կարող են վտանգ ներկայացնել ձեր կամ ուրիշների համար:
- Մի օգտագործեք և որևէ այլ կերպ մի կիրառեք հավաքված իրեղեն ապացույցները:

6.3 Նույնականացում

- **Ձեռք բերեք և գրանցեք լրացուցիչ տեղեկատվություն իրեղեն ապացույցների վերաբերյալ՝** դրանց իսկությունը հաստատելու համար (Տե՛ս Հավելված 2):

7. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

7.1 Սահմանում և սկզբունքներ

- Փաստաթղթեր կարող են լինել ինչպես նյութական իրերը, այնպես էլ՝ թվային տեղեկատվությունը (թվային ձևաչափով պահպանվող և/կամ փոխանցվող տվյալները):
- **Մի փոփոխեք ստացված փաստաթղթերը, անկախ նրանից՝ դրանք բնօրինակներ են թե պատճեններ:**
- Օգտագործեք համապատասխան մեթոդներ՝ թվային տեղեկատվության (ապացույցների) մեջ փոփոխությունները նվազագույնի հասցնելու համար: **Փաստաթղթավորեք ապացույցները պահպանելու համար ձեռնարկած բոլոր քայլերը:**
- Փաստաթղթերն ուսումնասիրելիս օգտագործեք ստերիլ ձեռնոցներ:
- Լուսանկարեք փաստաթղթերը:
- Տեղյակ եղեք որոշակի **փաստաթղթեր ստանալուն կամ տիրապետելուն առնչվող կիրառելի օրենսդրությանը** և հնարավոր ռիսկերին:

7.2 Թվային տեղեկատվության առանձնահատկությունները

- Հնարավորության դեպքում թվային տվյալների փորձագետները պետք է ուսումնասիրեն թվային տվյալներ պարունակող էլեկտրոնային սարքերը:
- Եթե դա հնարավոր չէ, հավաքեք բնօրինակ ֆիզիկական կրիչները և պահպանեք դրանք անվտանգ կերպով՝ փորձագետի կողմից հետագա հետազոտության համար:
- **Մի ուսումնասիրեք և մի օգտագործեք սարքի պարունակած տվյալները:**
- Եթե հնարավոր չէ հավաքել և պահպանել էլեկտրոնային սարքերը, բայց դրանցում պարունակվող տվյալները կարևոր են և կարող են վնասվել, ապահովեք թվային փորձաքննության փորձագետի աջակցությունը՝ տվյալների փորձաքննություն անցկացնելու համար:

Թվային լուսանկարներ և տեսագրություններ

Թվային լուսանկարներ հավաքելիս անհրաժեշտ է, հնարավորության դեպքում, վերցնել դրանց բնօրինակները (մետատվյալներ պարունակող): Տարատեսակ մեսենջերներով ուղարկված նկարները և՛ ցածր որակի են, և՛ առկա է մետատվյալների կորստի ռիսկ: Մետատվյալները կարող են պարունակել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են՝ լուսանկարի կատարման օրը և ժամը, վայրը, օգտագործված սարքի տվյալները՝ մոդելը,

տեսախցիկի օբյեկտիվը, ֆոկուսային հեռավորությունը, գունային շեղումները, և այլն:

Հնարավորության դեպքում ցանկալի է լուսանկարը վերցնել հենց այն կրիչից, որի մեջ այն սկզբնապես պահպանվել է: Այդ դեպքում մետատվյալների պահպանման հավանականությունը բարձր է:

Եթե, այնուամենայնիվ, լուսանկարը ստացվել է այնպիսի եղանակով, որ կորսվել են դրա մետատվյալները ցանկալի է բացահայտել և արձանագրել դրա ծագման աղբյուրը՝ լուսանկարման վայրը, օրն ու ժամը, լուսանկարողի ինքնությունը, այլ հանգամանքներն ու մետատվյալները:

Բաց աղբյուրներից տեսագրություններ ձեռք բերելիս պետք է կատարել հետևյալ քայլերը.

- Պահպանել տեսագրության հղումը:
- Ներբեռնել տեսագրությունն այնպիսի համակարգչային հավելվածով (օրինակ՝ BandiCam), որը չի վնասի տեսագրության որակը: Նման հավելվածով տեսագրության պահպանումը պետք է կատարվի հնարավորինս բարձր որակի էկրան ունեցող համակարգչով (առնվազն 1920x1080 կետայինությամբ):
- Համակարգչի միջոցով վերարտադրել տեսագրությունը, որին զուգահեռ այլ տեսանկարահանող սարքի միջոցով (օրինակ՝ սմարտֆոնի) տեսանկարահանել վերարտադրվող տեսագրությունը սկզբից մինչև վերջ: Տեսագրությունը վերարտադրվելուց հետո մկնիկի միջոցով ցույց տալ համակարգչի վրա այդ պահի ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը:

8. ԱՌՑԱՆՑ ՓԱՍՏԱՀԱՎԱՔՈՒԹՅՈՒՆ

8.1 Հիմնական ստանդարտները

- Մտածեք, թե արդյոք հնարավո՞ր է խախտեք որևէ կիրառելի օրենսդրություն և արդյոք ինքներդ ձեզ և/կամ ուրիշներին ենթարկու՞մ եք անընդունելի ռիսկերի:
- Նախքան որևէ առցանց գործողություն իրականացնելը, գնահատեք թվային միջավայրի անվտանգությունը: Կիրառեք այնպիսի թվային ենթակառուցվածք, որը պատշաճ կերպով կպաշտպանի հնարավոր ռիսկերից:
- Ձեռք բերեք առցանց տեղեկատվությունն այնպես, որ հնարավոր լինի հաստատել տեղեկատվության իսկությունը և ամբողջականությունը:
- Հավաքեք առցանց նյութերն իրենց բնօրինակ ձևաչափով կամ դրան հնարավորինս մոտ ձևաչափով:
- Գրանցեք տվյալ աղբյուրի URL-ը, HTML-ը: Իրականացրեք «էկրանի նկարահանում» կամ «ամբողջ էջի նկարահանում»՝ թիրախային վեբկայքի սքրինշոթի կամ տեսանյութի միջոցով: Արձանագրեք տվյալների ստացման ամսաթիվն ու ժամը:
- Հնարավորության դեպքում գրանցեք նաև ներկառուցված մեդիա ֆայլերը և մետատվյալները, համատեքստային տվյալները և հավաքագրման տվյալները:
- Հաշվեք և գրանցեք յուրաքանչյուր թվային տարրի հեշ արժեքը:
- Պահպանեք տվյալները նոր/մաքուր մեդիա սարքում:

Աղբյուրների արժանահավատության խնդիրը՝ մեդիա մոնիթորինգի շրջանակում

Մեդիա մոնիթորինգի շրջանակում առաջնային հարցերից մեկը դիտարկվող աղբյուրների որակն է և արժանահավատությունը: Նախքան տվյալներ հավաքելը, հարկավոր է կատարել աղբյուրների վերլուծություն՝ անդրադառնալով դրանց մասնագիտական արհեստավարժությանը, հանրային հեղինակությանը / համբավին, մինչ այդ պահը հրապարակած տվյալների հավաստիությանը և ճշգրտությանը:

Կարևոր է նաև վերլուծել տեղեկատվության կոնկրետ աղբյուրի գործունեության համատեքստը. որ թիրախ լսարանների համար է այն աշխատում և ինչ ուղերձներ է տարածում, որոնք են աղբյուրի նկատմամբ արտաքին ազդեցությունները և ում կողմից, ինչ թաքնված և ակնհայտ շահեր են ընկած աղբյուրի գործառության հիմքում, և այլն:

Վերջապես, որքան էլ արժանահավատ լինեն տարատեսակ աղբյուրները,

հավաքվող տվյալների հավաստիությունը ստուգելու համար կարևոր է իրականացնել դրանց խաչաձև ստուգումը՝ առնչվող տվյալներ հավաքելով նաև այլ աղբյուրներից:

Ստորև ներկայացված են մեդիա մոնիթորինգի իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծության օրինակներ, որոնք հետագայում ունեցել են ապացուցողական նշանակություն:

Օրինակ N1. *Մեդիա մոնիթորինգի արդյունքում հնարավոր է եղել պարզել Ադրբեջանի կողմից սպանված զինծառայողի ինքնությունը՝ վերջինիս անձնական լուսանկարների հետ համադրման միջոցով դուրս բերելով այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ տարբերվող հագուստն ու զինվորական համազգեստը:*

Օրինակ N2. *Անձնական լուսանկարների և ադրբեջանական սոցիալական ցանցերում շրջանառվող տեսանյութերի համադրությամբ զինծառայողի սպանության բացահայտման, վերջինիս նույնականացման օրինակ:*

Օրինակ N3. *Մեդիա մոնիթորինգի արդյունքում սպանության ժամանակացույցի, տեղադիրքի նույնականացման օրինակ:*



9. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

9.1 Առողջապահական մասնագետների ներգրավում

- Միայն որակավորված բժիշկները կարող են իրականացնել տուժած անձի բժշկական զննություն:
- Եթե չկան այդպիսի մասնագետներ, սահմանափակեք ձեր շփումները տուժածների հետ՝ միայն արձանագրելով տեսանելի վնասվածքները:
- Նախապես ստացեք տեղեկացված համաձայնություն և արձանագրեք կատարված յուրաքանչյուր գործողություն:
- Պահպանեք հավաքված տեղեկատվությունը գաղտնիության բարձր մակարդակով:
- Խրախուսեք և աջակցեք տուժածներին, որպեսզի դիմեն մասնագիտական բժշկական օգնության և պահպանեն բոլոր ապացույցները (արձանագրությունները):

10. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ

10.1 Հանցագործության վայրի քննության սկզբունքներ



- Ոչ մի կերպ մուտք մի գործեք և «մի խառնեք» հանցագործության վայրը:
- Միջոցներ ձեռնարկեք՝ **կանխելու համար այլոց կողմից հանցագործության վայրի ամբողջականության խախտումը:**
- Միջամտեք միայն բացառիկ հանգամանքներում, մասնավորապես, եթե.
  - Ոչ մի իրավասու քննչական մարմին չի ցանկանում կամ ի վիճակի չէ հսկել հանցագործության վայրը: Կամ, եթե նրանք իրազեկվել են, որ նման միջամտություն է իրականացվում և տվել են իրենց համաձայնությունը:
  - Տեղանքը չուսումնասիրելը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի վճռորոշ տեղեկատվության կորստի կամ ոչ վերականգնելի վնասի:
  - Կարող եք պահպանել «մի վնասիր» սկզբունքը:
  - Ունեցեք կարողություն և ռեսուրսներ՝ հետևելու պատշաճ ընթացակարգերին:
- Մի շարունակեք, եթե նույնականացված ռիսկերը գնահատվում են որպես անընդունելի:
- Պահպանեք օբյեկտիվություն և անաչառություն:
- Հարգեք գաղտնիությունը և մարդկային արժանապատվությունը:
- Կարևոր է հիշել, որ ժամանակավոր, **հեշտ կորսվող և «փխրուն» ապացույցները պետք է առաջինը հավաքագրել:** Բոլոր ապացույցները պետք է պատշաճ կերպով կապոցավորված, պիտակավորված և դրոշմավորված լինեն:

Որո՞նք են հանցագործության վայրի քննության ընթացակարգերը

Թեպետ հանցագործություններին առնչվող վայրերն ու ինքնին հանցագործությունը կարող են տարբեր լինել, կան մի քանի ընդհանուր

սկզբունքներ՝ հանցագործության վայրի պատշաճ քննություն անցկացնելու համար։ Կարևոր է հիշել, որ դեպքի վայրից ապացույցների հավաքագրումից առավել առաջնային է տարածքում առկա անձանց անվտանգության ապահովումը։ Պատշաճ քննություն անցկացնելու համար պետք է հետևել մի քանի քայլերի։

- **Առանձնացնել, ապահով վիճակի բերել հանցագործության վայրը:** Դեպքի վայրի ոչ պատշաճ առանձնացման պարագայում կարող եք բախվել ապացույցների խաթարման, փոփոխման, կորսման վտանգի։ Իրավասու մարմիններից պահանջվում է իրականացնել հանցագործության վայրի պահպանմանն ուղղված պատշաճ քայլեր՝ դեպքի վայրի հնարավոր խաթարումից խուսափելու համար։
- **Միմյանցից մեկուսացնել ականատեսներին:** Դեպքի վայրում աշխատող անձանցից նաև պահանջվում է մեկուսացնել ականատեսներին՝ վերջիններիս թույլ չտալով միմյանց հետ զրույցի բռնվել։ Սրա նպատակն է խուսափել ականատեսների շրջանում «մեկ, ընդհանուր վկայության» ձևավորումից, և ապահովել յուրաքանչյուր ականատեսի ինքնուրույն, սեփական աչքերով տեսածի կամ ականջներով լսածի վրա հիմնված պատմության արձանագրումը։
- **Արձանագրել դեպքի վայրի առանձնահատկությունները:** Այս քայլի իրականացման հիմնական մեթոդները դեպքի վայրի, իրեղեն ապացույցների տեսա և լուսանկարահանումներն են։ Դեպքի վայրի ընդհանուր լուսանկարներն ու տեսանկարահանումները պետք է իրականացնել տարբեր անկյուններից և հեռավորություններից։ Կարևոր է հիշել նաև հնարավոր իրեղեն ապացույցների կամ մարմինների՝ խոշոր պլանով լուսանկարահանման մասին։ Դեպքի վայրի զննության ընթացքում նաև անհրաժեշտ է անձնական նշումներ անել՝ առանձնահատկությունների և այլ կարևոր տեղեկատվության պատշաճ արձանագրման նպատակով։
- **Մանրամասն զննություն անցկացնել՝ իրեղեն ապացույց գտնելու նպատակով:** Այս գործընթացը պետք է մանրակրկիտ իրականացնել՝ որևէ ապացույց բաց չթողնելով։ Իրեղեն ապացույցի զննությունը կարելի է իրականացնել մի քանի տարբերակով։

- **Կապակցման մեթոդ (link method):** Այս մեթոդի դեպքում մեկ ապացույցը հանգեցնում է մեկ այլ ապացույցի բացահայտման։



- **Շերտավորման կամ գծավորման մեթոդ (strip or line method):** Այս մեթոդի կիրառման ժամանակ տեղանքի քննությունն իրականացնողները սկսում են հանցագործության վայրի մի վերջնակետից և ուղիղ անցում կատարում մյուսին: Սա հարմար է այն դեպքում, եթե հանցագործության վայրի սահմանները հստակեցված են և կարելի է տարբերակել տեղանքի «սկիզբն ու ավարտը»:



- **Գոտիավորման մեթոդ (zone method):** Այս մեթոդը լավագույնս կիրառելի է որոշակիացված գոտիների կամ տարածքների համար, հատկապես՝ սենյակներ ունեցող շինություններում իրեղեն ապացույցներ փնտրելու համար, որտեղ թիմի յուրաքանչյուր անդամի կարող է «վստահվել» փաստահավաքության մի գոտի՝ այնտեղից ապացույցներ դուրս բերելու համար:



- **Անիվի կամ ճառագայթման մեթոդ (Wheel or ray method):** Սա կիրառելի է դաշտերի, անապատների և այլ բաց տարածությունների դեպքում: Փաստահավաքություն անցկացնող մի քանի մասնագետ դեպքի վայրի կենտրոնից «նայում են» դեպի տարբեր կետեր, կամ էլ տարբեր կետերից նայում են դեպի դեպքի վայրի կենտրոն:



- **«Խառը» զննության մեթոդ (Random search method):** Այս մեթոդը չունի իրեն բնորոշ որևէ հստակ ձևաչափ: Ցանկացած իրավիճակի համար հարմարունակության արդյունքում այս մեթոդը փաստահավաքության աշխատանքներում ամենաշատ գործածվողներից է:



10.2 Ապահովեք և պահպանեք հանցագործության վայրի ամբողջականությունը

- **Կիրառեք հանցագործության վայրի «խախտման» կանխարգելման խիստ միջոցներ** (օրինակ, սահմանազատեք տեղանքը, կրեք անձնական պաշտպանության հանդերձանք և սահմանափակեք մուտքի հնարավորությունները):

10.3 Փաստաթղթավորեք հանցագործության վայրի ձեր քննությունը

- Գրանցեք բոլոր վերաբերելի տեղեկությունները (օրինակ՝ դեպքի վայր ժամանելու ամսաթիվը և ժամը, գտնվելու վայրը, ներկա անձինք, ընդհանուր նկարագրությունը և մեթոդաբանությունը):
- Նախքան դեպքի վայրի որևէ տեսակի տեղափոխությունները, կատարեք լուսանկարահանում և տեսանկարահանում՝ տարբեր դիտանկյուններից. ընդհանուր բնույթի և կոնկրետ դրվագների ու ասպեկտների:

10.4 Հանցագործության վայրին առնչվող այլ սկզբունքներ

- Մի դիպչեք և մի հավաքեք վտանգավոր իրեր. դրա փոխարեն լուսանկարեք:
- Հանցագործության վայրում ստեղծեք ապահով և անվտանգ տարածք՝ իրերի ժամանակավոր պահպանման համար: Հավաքված իրերը տվյալ տարածք տեղափոխեք:
- Հավաքեք հանցագործության վայրում ներկա անձանց կոնտակտային տվյալները և դիտարկեք նրանցից ոմանց հետ հարցազրույց անցկացնելու հնարավորությունը:
- Մարդկանց դիակներին առնչվելու դեպքում.
  - Մի դիպչեք և մի տեղաշարժեք մարմինները:
  - Լուսանկարեք կամ տեսանկարահանեք:
  - Հավաքեք տեղեկություններ՝ զոհերի ինքնությունը նույնականացնելու համար:
  - Արձանագրեք հնարավոր հուղարկավորության փաստերը:

Ստորև ներկայացված են հանցագործության վայրում պատշաճ ընթացակարգերի պահպանմամբ լուսանկարահանում անցկացնելու օրինակներ: Լուսանկարներն արտացոլում են հանցագործությանն առնչվող անհրաժեշտ դետալները՝ հասցրած վնասներից մինչև տեղադիրք:

ԼՈՒՍԱՆԿԱՐ N1

ԼՈՒՍԱՆԿԱՐ N2

ԼՈՒՍԱՆԿԱՐ N3

ԼՈՒՍԱՆԿԱՐ N4

10.5 Զանգվածային հուղարկավորությունների և գերեզմանների փաստաթղթավորում

- Արտաշիրիմումներն ու դիահերձումները պետք է իրականացնեն միայն հավաստագրված մասնագետները:
- Համապատասխան մարմիններին իրազեկեք նմանատիպ վայրերի մասին:
  - Կարևոր տվյալները պահպանեք հենց թաղման վայրում:
  - Փակեք կամ սահմանափակեք մուտքը դեպի տվյալ վայր և տեղական համայնքին ևս բացատրեք վայրի պահպանության կարևորությունը:
  - Տեսանկարահանման կամ լուսանկարների միջոցով արձանագրեք գտածոները և դեպքի վայրը:

Փաստահավաքությունն՝ արտակարգ իրավիճակներում

Արտակարգ իրավիճակներում փաստահավաք առաքելության իրականացումը կարող է վտանգվել՝ մի շարք պատճառներով: Արտակարգ իրավիճակներում.

- Մարդու իրավունքների խախտումներին առնչվող տարբեր գործընթացներ և ռիսկեր կարող են դեռ անավարտ լինել, ընթացքի ու գործողության մեջ լինել: Այդ պահին ստացված վկայությունը կարող է կորցնել ակտուալությունը՝ նոր խնդիրների ու խախտումների ի հայտ գալուն պես:
- Կարող են լինել անվտանգության ռիսկեր՝ թե՛ վկայություն վերցնողների, թե՛ վկայություն տվողների համար (օրինակ, պատերազմական գործողությունների ժամանակ):
- Վկայություն տվողների հուզական լարված վիճակն ու կենսական պահանջմունքների վտանգվածությունը (խոցելիությունը) կարող է սահմանափակել դեպքերի ու խախտումների ճշգրիտ վերարտադրության հնարավորությունը:

Եթե նշված ռիսկերից որևէ մեկն առկա է, անհրաժեշտ է քննարկել տվյալ պայմաններում փաստահավաք գործունեության նպատակահարմարության և արդյունավետության հարցը:

Արտակարգ իրավիճակներում կարելի է ընդհանուր գնահատում կատարել՝ արձանագրելով որոշ կարևոր տվյալներ և հավաքելով անձանց կոնտակտային տվյալները: Դրանց հիման վրա հետագայում հնարավոր կլինի իրականացնել փաստահավաք գործունեություն՝ ավելի խորը և համապարփակ տվյալներ ստանալու համար:

11. ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

11.1 Ընդհանուր սկզբունքներ

- Գնահատեք տեղեկատվության պահպանմանն առնչվող ռիսկերը:
- Պահպանեք յուրաքանչյուր իրի և հավաքված տեղեկատվության **ամբողջականությունը:**
- Իրականացրեք **տվյալների հավաքման շղթայի մանրակրկիտ և անխափան արձանագրում՝ հավաքված յուրաքանչյուր իրի համար** (Տե՛ս Հավելված 2):
- Ստեղծեք հավաքված տեղեկատվության գրանցամատյան կամ տվյալների բազա և կիրառեք տեղեկատվության պատշաճ կառավարման սկզբունքներ:

11.2 Փաթեթավորում

- Հավաքված յուրաքանչյուր իր փաթեթավորեք առանձին՝ դրա անվտանգ պահպանումն ապահովելու և խաթարումը կանխելու համար:
- Օգտագործեք համապատասխան փաթեթավորում՝ ըստ իրերի չափի և բնույթի:

11.3 Պիտակավորում, կնքում և կատալոգավորում

- Յուրաքանչյուր փաթեթի վրա հիմնական տեղեկություններով նշումներ կատարեք՝ հեշտ նույնականացնելու համար:
- Փակ փաթեթները կնքեք՝ կնիքի վրա ամսաթիվ ու ստորագրություն դնելով:
- **Ստեղծեք փաստաթուղթ կամ տվյալների բազա, որտեղ կգրանցեք հավաքված բոլոր նյութերի վերաբերյալ հիմնական տեղեկությունները:**

11.4 Պահպանում

- Հավաքված բոլոր իրերը և տեղեկատվությունը պահպանեք ապահով կերպով՝ օգտագործելով ֆիզիկական կամ թվային պահեստավորման համակարգեր:
- Կողպեք, **գաղտնագրեք, անանուն դարձրեք զգայուն տեղեկատվությունը՝ այն առանձին պահելով հավաքված մնացած նյութերից:**
- Տարբեր անձանց համար **տեղեկատվության հասանելիությունը հասցրեք նվազագույնի** (միայն խիստ անհրաժեշտության դեպքում):
- **Պարբերաբար կրկնօրինակեք հավաքված բոլոր տեղեկությունները՝ պատճենները պահելով առանձին:**
- Մշակեք անվտանգության պլան այն արտակարգ իրավիճակների համար, երբ վտանգվի որևէ տեղեկություն:

12. ՀԱՎԱՔՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

12.1 Հիմնական սկզբունքներ

- Ձեր վերլուծությունը կատարեք այնպես, որ դա չազդի հավաքված նյութերի **ամբողջականության ու պահպանության** վրա:
- Ձեր վերլուծությունը փաստերի հավաքման ընթացքում արված **գրառումներից առանձին կատարեք:**
- Հստակ հղումներ կատարեք օգտագործված տեղեկատվությանն ու նյութերին, ներկայացրեք կիրառված **մեթոդաբանությունը:**
- Վերլուծության մեջ (հատկապես երբ այն վերաբերում է տվյալների մեծ բազաներին) կարևոր են հետևյալները.
  - Աղբյուրի գնահատում (աղբյուրի արժանահավատությունը և տեղեկատվության հուսալիությունը):
  - Տեղեկատվության համատեքստայնացում (միացնել, կապել և համեմատել հավաքված այլ տեղեկատվության հետ):
  - Տեղեկատվության արժեքը/արժանահավատությունը (հաստատումն այլ աղբյուրներից):

Զեկույցների և սեղմագրերի մշակմանն առնչվող խորհուրդներ

Եթե փաստահավաք գործունեության արդյունքում հրապարակվելու է հանրային զեկույց, կարևոր է ապահովել դրա հասցեականությունը՝ թիրախային տարբեր լսարանների համար: Նախքան զեկույցի մշակումը, ցանկալի է ունենալ հետևյալ հարցերի պատասխանները.

- Ո՞վ է զեկույցի թիրախային լսարանը / ընթերցողը:
- Ի՞նչ հետաքրքրություններ և շահեր ունեն նրանք:
- Ի՞նչ գիտեն թեմայի մասին և հավելյալ ի՞նչ գիտելիքի կարիք ունեն:
- Զեկույցի ո՞ր արդյունքներն են առավել հետաքրքիր տվյալ թիրախային լսարանի համար:
- Մենք ի՞նչ խնդիր ենք լուծում՝ հրապարակելով զեկույցը / ի՞նչ ենք ակնկալում:
- Ինչպիսի՞ տեղեկատվություն է անհրաժեշտ ներառել զեկույցում, որպեսզի տվյալ թեման ընկալելի լինի տեղեկացված, բայց ոչ փորձագետ ընթերցողի համար:
- Ընթերցողի համար գրավիչ և մատչելի ինչպիսի՞ ձևաչափ ենք նախընտրում. ինֆոգրաֆիկա, նկարներ, քարտեզներ, գույներ, տառատեսակներ և այլն:

Ժամանակի սղության և այլ պատճառների բերումով թիրախային լսարանի ներկայացուցիչները հաճախ կարող են չկարդալ բուն զեկույցը: Այդ դեպքում պահանջված կարող է լինել սեղմագիրը, որը զեկույցի կարևոր արդյունքների, եզրահանգումների և առաջարկների համառոտ շարադրանքն է: Այն պետք է լինի պարզ, հստակ, թեթև կարդացվող ու հակիրճ: Սեղմագիրը շահագրգիռ կողմերի ուշադրությունը սևեռում է տվյալ խնդրի վրա՝ հետագայում նրանց մոտ հետաքրքրություն առաջացնելու՝ ծանոթանալու հիմնական զեկույցին:

Օմբուդսմենի եզրակացություններն՝ առանց ապացույցների ներկայացման

Որոշումների կայացման գործընթացում կարևոր են և մեծ ազդեցություն ունեն Օմբուդսմենի եզրակացությունները, որոնք սովորաբար հիմնված են ուսումնասիրությունների կամ քննության ընթացքում հավաքված ապացույցների վրա: Օմբուդսմենի եզրակացությունների հիմնավորվածությունը հաճախ հիմնված է դրանց բացահայտումները հաստատող ապացույցների որակի և քանակի վրա: Այնուամենայնիվ, կարող են լինել իրավիճակներ, երբ առանց համապատասխան ապացույցների ներկայացման՝ Օմբուդսմենի փորձը, դատողությունը, փորձագիտական հմտությունները բավարար են եզրակացություններ անելու համար, օրինակ.

- **Երբ առկա են հստակ օրինաչափություններ կամ միտումներ:** Եթե նախկինում Օմբուդսմենը հանդիպել է նմանատիպ դեպքերի կամ վարքագծի օրինաչափությունների և իր փորձի հիման վրա կարող է զուգահեռներ անցկացնել առկա իրավիճակի հետ, ապա կարող են արվել եզրակացություններ՝ առանց բավարար ապացույցների ներկայացման:
- **Արտակարգ իրավիճակներում:** Նման իրավիճակների բնույթով պայմանավորված՝ Օմբուդսմենը կարող է եզրակացություններ անել՝ հիմնվելով իր դատողության և փորձի վրա, նաև այն դեպքերում, եթե ապացույցների համապարփակ հավաքումը հնարավոր չէ՝ կապված ժամանակացույցի առանձնահատկությունների հետ:
- **Երբ առկա է ապացույցների սահմանափակ հասանելիություն:** Որոշ դեպքերում բավարար ապացույցների ձեռքբերումը կարող է անիրագործելի կամ անհնարին լինել այնպիսի գործոնների պատճառով, ինչպիսիք են՝ գաղտնիության հետ կապված մտահոգությունները, ներգրավված կողմերի համագործակցության բացակայությունը և այլն: Նման իրավիճակներում Օմբուդսմենին կարող է անհրաժեշտ լինել ապավինել իր դատողություններին և

փորձառությանը՝ առկա տեղեկատվության հիման վրա եզրակացություններ անելու համար:

Թեև Օմբուդսմենի փորձն ու հմտություններն արժեքավոր են, սակայն թափանցիկությունն իր գործունեության կարևորագույն սկզբունքներից է: Հետևաբար, Օմբուդսմենի կողմից ապացույցներ չներկայացնելը պետք է լինի հիմնավորված՝ վերը նշված հանգամանքների առկայությամբ:

ՕԳՏԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐ

1. Երեխայի լավագույն շահերը / Ուղեցույց-ձեռնարկ: Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ): Երևան, 2022, https://cutt.ly/UwShoeXf
2. Միջազգային քրեական իրավունք: Գ. Պետրոսյան: Երևան, 2021, ԵՊՀ հրատ., https://cutt.ly/3wBUOpoI
3. Սուպերվիզիան սոցիալական աշխատանքում / Ուսումնական ձեռնարկ: Մ. Անտոնյան, Ա. Սահակյան, Ա. Խաչատրյան, Ռ. Մարկոսյան, Ն. Գեղամյան, Ա. Ոսկանյան: Երևան, 2016, ԵՊՀ հրատ., https://cutt.ly/7wBp7GAr
4. Collecting witness evidence. HSE - Collecting witness evidence - Witness statements
5. Documenting international crimes and human rights violations for accountability purposes: Guidelines for civil society organisations, https://cutt.ly/0wBUPXxy
6. Guide: Trauma informed legal practice for lawyers working with adult survivors of human rights violations. Guide: Trauma informed legal practice for lawyers working with adult survivors of human rights violations - European Human Rights Advocacy Centre (EHRAC)
7. Guidelines on investigating violations of IHL: Law, policy and good practice. Microsoft Word - Guidelines on Investigating Violations of International Humanitarian Law Law, Policy and Good Practice.docx (geneva-academy.ch)
8. Standard Guide for Post Mortem Examination Photography. OSAC 2021-S-0013_-Standard Guide for Post Mortem Exam Photo_DRAFT OSAC PROPOSED_OPEN COMMENT.pdf (nist.gov)
9. Successful Trauma Informed Victim Interviewing. Final Design Successful Trauma Informed Victim Interviewing.pdf (theiacp.org)
10. Working with Trauma Survivors: What Workers Need to Know. Working with Trauma Survivors: What Workers Need to Know - PTSD: National Center for PTSD (va.gov)
11. Witness Statements in International Human Rights Litigation: Preparation Guide, https://cutt.ly/ywBUA61F

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ

Ձեր տեղեկացված համաձայնությունը պահանջվում է ինչպես Ձեր տրամադրած տեղեկատվությունը գրանցելու, այնպես էլ՝ օգտագործելու համար: Տալով ձեր տեղեկացված համաձայնությունը՝ Դուք ընդունում եք, որ տեղեկացված եք և հասկանում եք այս փաստահավաք գործունեության բնույթն ու շրջանակը, համաձայնել եք մասնակցել դրան և ընդունում եք, որ Ձեր տրամադրած տեղեկատվությունը կարող է փոխանցվել տեղական և միջազգային հետաքննող մարմիններին: Ստորագրելով այս փաստաթուղթը՝ Դուք տալիս եք Ձեր տեղեկացված համաձայնությունը:

Սույնով ընդունում և հաստատում եմ, որ.

- Սա կամավոր գործընթաց է. ես ազատ կերպով եմ տրամադրել տեղեկատվություն, փաստաթղթեր, լուսանկարներ կամ իրեր՝ առանց որևէ հարկադրանքի, սպառնալիքի կամ պարտադրանքի:
- Ես իրազեկված եմ, որ իմ տրամադրած տեղեկատվությունը, փաստաթղթերը, լուսանկարները կամ իրերը կարող են օգտագործվել իրավական գործընթացների շրջանակներում և կարող են փոխանցվել իրավասու պետական և/կամ միջազգային մարմիններին, այդ թվում՝ հետաքննող:
- Ես իրազեկված եմ, որ իմ տրամադրած տեղեկատվությունը, փաստաթղթերը, լուսանկարները կամ իրերը կարող են օգտագործվել զեկույցներ, վերլուծություններ և այլ հրապարակումներ պատրաստելու համար:
- Ինձ բացատրվել են փաստահավաք գործունեության բնույթն ու նպատակը, իմ տրամադրած տեղեկատվության հնարավոր օգտագործումը ներպետական և միջազգային մակարդակներում, ինչպես նաև՝ այդ գործընթացներում իմ մասնակցության հետ կապված առանձնահատկությունները:

Սույնով ես համաձայնում եմ.

- Տալ վկայություն, հանձնել փաստաթղթեր, լուսանկարներ և այլ իրեր, լուսանկարվել, ձայնագրառվել, ինչպես նաև ենթարկվել զննության՝ ֆիզիկական վնասվածքների արձանագրմամբ:
- Փոխանցել իմ տրամադրած տեղեկատվությունը, փաստաթղթերը, լուսանկարները կամ իրերը իրավասու պետական և/կամ միջազգային մարմիններին, այդ թվում՝ հետաքննող:

Տեղեկատվության օգտագործման կիրառելի սահմանափակումներ.

1.
2.
3.

Ամսաթիվ և վայր _____

Անուն և ազգանուն _____

Ստորագրություն _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Լրացվում է փաստահավաք աշխատանքն իրականացնողի կողմից

Տեղեկատվության հավաքման ամսաթիվը _____

Տեղեկատվության հավաքման վայրը _____

Տեղեկատվության հավաքման եղանակը _____

Տեղեկատվության բովանդակությունը _____

Տեղեկատվությունը հավաքվել է (ում կողմից) _____

Կազմակերպություն _____

Տեղեկատվության հավաքման հանգամանքները / պայմանները _____

_____

Հավաքված տեղեկատվության նկարագրություն (ներառյալ՝ արժեքը և հավաքման նպատակը) _____

_____

Անուն-ազգանուն և ստորագրություն _____

Ամսաթիվ և ժամ	Կազմված է *(Անուն-ազգանուն և ստորագրություն)*	Ստացված է *(Անուն-ազգանուն և ստորագրություն)*	Կազմման նպատակը